

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ



ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՒ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԱՍԲԻՈՆ

« 061105.01.6 *ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ* »

Կրթական ծրագիր

Հաստատում եմ

Ռեկտոր՝

Ա.Յու.Սարգսյան

«-----» ----- 2020 թ.

«061105.01.6 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ»

Կրթական ծրագիր

Կրթական ծրագրի կառուցվածքը

1. «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ» կրթական ծրագրի բնութագիրը

«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ» 4 տարի տևողությամբ բակալավրական ծրագիր է, որի նպատակը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետի պատրաստումն է, ով զբաղվելու է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հիմնարար և կիրառական խնդիրներով, ինչպես Արցախի, այնպես էլ միջազգային գիտատնտեսական, հետազոտական կենտրոններում և արդյունաբերական կազմակերպություններում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը նորարարական գործողություն է այն իմաստով, որ էապես փոխում է կազմակերպություններում իրականացվող տարաբնույթ գործունեության ողջ բովանդակությունը: Մեկ այլ բնորոշմամբ «Տեղեկատվական տեխնոլոգիաները հաշվողական տեխնիկայի, կապի միջոցների ու հաճախորդներին տեղեկատվությունն առաջարկելու այլ ձևերն օգտագործող՝ զարգացած ծրագրային ապահովում կիրառող և կառավարման խնդիրների լուծման համար տեղեկատվության հավաքման, գրանցման, փոխանցման, կուտակման, որոնման, մշակման և պաշտպանության իրականացման համակարգային կազմակերպված մեթոդների և միջոցների ամբողջությունն են»:

Ունենալով սահմանափակ նյութական ռեսուրսներ և գտնվելով շրջափակման մեջ, Արցախը պետք է կարողանա առավելագույնս օգուտ քաղել ՏՏ ոլորտի զարգացումով ընձեռվող հնարավորություններից, քանզի այն չի պահանջում տրանսպորտային ծախսեր և զերծ է արտահանման ֆիզիկական խոչընդոտներից:

Ծրագրի մասնագիտական հիմնական ուղղվածություններն են՝

- ժամանակակից ՏՏ օգտագործման հիմքի վրա տեղեկատվական համակարգերի կառուցման և տեղեկատվական գործընթացների իրականացման արդյունավետ մեթոդների հետազոտում և մշակում,
- համակարգային վերլուծության կազմակերպում և անցկացում,
- կիրառական և տեղեկատվական գործընթացների մոդելավորում,
- ՏՀ ստեղծման, շահագործման կազմակերպում և ղեկավարում,
- կիրառական խնդիրների լուծման ավտոմատացում,
- կիրառական ոլորտներում ՏՀ արմատավորման ուսուցում,
- ծրագրավորում ժամանակակից ծրագրավորման լեզուներով:

Ծրագրի շրջանավարտների **մասնագիտական գործունեության ոլորտն** ընդգրկում է տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագիտացված կազմակերպությունները, բուհերը, դպրոցները և այլն: Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել բանկային համակարգում, որտեղ հնարավոր է ձեռք բերված գիտելիքների կիրառումը (տարբեր գործընթացների մոդելավորման և ծրագրավորման, ռիսկերի գնահատման համար):

Ծրագրի բարեհաջող ավարտին կտրվի **ինֆորմատիկայի բակալավրի որակավորում**, որն ավարտած անձը կարող է.

- աշխատել որպես ծրագրավորող, վերստուգող կամ վերլուծաբան,

- աշխատել կիրառական ծրագրային փաթեթների հետ,
- աշխատել անհատական, լոկալ ու գլոբալ կոմպյուտերային ցանցերի և հեռահաղորդակցական համակարգերում,
- մասնագիտական հայտնի մեթոդները կիրառել տարբեր բնագավառներում առաջացող խնդիրների լուծման համար,
- մոդելավորել տարբեր գործընթացներ,
- կատարել տվյալների որոնում և օգտագործել դրանք,
- ծրագրավորել տարբեր ծրագրավորման լեզուներով:

3. Դասընթացների ծրագրեր

Կից ներկայացվում են:

4. Ուսումնական պլան, գործառնական պլան

Կից ներկայացվում են:

Կրթական ծրագիր

Մասնագիտություն/Մասնագիտացում՝

- | | |
|--|---|
| 1. Շնորհվող որակավորում՝ | ինֆորմատիկայի բակալավր |
| 2. Որակավորման աստիճանը՝ | բակալավր |
| 3. Դասընթացի տևողությունը՝ | 4 տարի /8 կիսամյակ/ |
| 4. Ուսումնառության ձևը՝ | առկա, հեռակա |
| 5. Կրեդիտ՝ | 240 ԵԿՓՀ ¹ |
| 6. Ընդունելության նվազագույն պահանջ՝ | միջնակարգ և մասնագիտական կրթություն |
| 7. Ավարտական աշխատանք՝ | ■ ԵԿՓՀ |
| 8. Պրակտիկա՝ | ■ ԵԿՓՀ |
| 9. Կրթական ծրագրի պատասխանատու ամբիոն՝ | Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն |
| 10. Ծրագրի բնութագիրը. | |

061105.01.6 «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել մասնագիտական կոմպետենցիաներ, որոնք անհրաժեշտ են ապագայում մասնագիտական հաջող գործունեության, ինչպես նաև ուսումնառության հաջորդ փուլերում կրթությունը շարունակելու համար:

¹Համաձայն կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգի, European Credit Transfer and Accumulation System

Ծրագրում ներգրավված դասախոսները վարում են ակտիվ գիտական և գործնական աշխատանք, մասնակցում են հետազոտական նախագծերի աշխատանքներին և պարբերաբար բարձրացնում իրենց որակավորումը:

Ծրագիրն ապահովված է նաև անհրաժեշտ ենթակառուցվածքներով և նյութական ռեսուրսներով. դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների անցկացման համար նախատեսված լսարաններով, լաբորատորիաներով, որոնք կահավորված են ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներով և ունեն ինտերնետային կապ:

Ծրագիրը բավարար չափով ապահովված է նաև անհրաժեշտ ուսումնական ռեսուրսներով՝ ուսումնական գրականությամբ (նաև էլեկտրոնային տարբերակով), մեթոդական ձեռնարկներով, դասախոսական տեքստերով (էլեկտրոնային տարբերակով), օժանդակ նյութերով և գիտական պարբերականներով:

Կրթական ծրագրի նպատակն է ուսանողներին տալ այնպիսի իմացություն, որն անհրաժեշտ և բավարար կլինի աշխատաշուկայում մրցունակ առաջարկ ձևավորելու համար: Այս նպատակից ելնելով, մեր կողմից խնդիր է դրվել **«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ»** մասնագիտությամբ բակալավրի որակավորում ստացած շրջանավարտը, ելնելով մասնագիտական գործունեության վերջնաարդյունքներից, պետք է.

Գիտենա՝

- Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնական բաժինները, կարողանա օգտվել գիտական և մեթոդական գրականությունից,
- տարբեր բնագավառներից կիրառական խնդիրների լուծման հիմնական ալգորիթմները,
- ծրագրավորման ժամանակակից լեզուներ,
- լոկալ և գլոբալ ցանցերի կազմակերպման հիմնական սկզբունքները,
- համակարգչի աշխատանքի սկզբունքները,
- տարբեր տիպի ու բնույթի տվյալների ներկայացման եղանակները, համակարգային ցանցերի կազմակերպման եղանակներն ու հարմարանքների կազմը:

Կարողանա՝

- մոդելավորել տարբեր գործընթացներ,
- կատարել տվյալների որոնում և օգտագործել դրանք,
- ծրագրավորել տարբեր ծրագրավորման լեզուներով,
- աշխատել կիրառական ծրագրային փաթեթների հետ,
- աշխատել տարբեր տեղեկատվական համակարգերում,
- մասնագիտական հայտնի մեթոդները կիրառել տարբեր բնագավառների խնդիրների լուծման համար:

Տիրապետի՝

- բնագավառի հիմնական մեթոդներին,
- ծրագրավորման ժամանակակից լեզուներին,
- կիրառական խնդիրների լուծման եղանակներին և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին:

Մասնագիտության նկարագրի ձևակերպումը:

Տեղեկատվությունն այսօր հասարակության համար ամենաթանկ ռեսուրսներից է և դասվում է այնպիսի ռեսուրսների շարքը, ինչպիսիք են՝ նավթը, գազը, օգտակար հանածոները և այլն: Ասվածը վկայում է, որ տեղեկատվության մշակումը կարելի է ընկալել որպես տեխնոլոգիա:

Տեղեկատվական տեխնոլոգիան գործընթաց է, որը ներկայացնում է սկզբնական տվյալների հավաքման, մշակման և հաղորդման համար օգտագործվող միջոցների և մեթոդների ամբողջությունը: Նյութական արտադրության տեխնոլոգիայի նպատակն է սպառողական պահանջները բավարարող արտադրանքի թողարկումը: Տեղեկատվական տեխնոլոգիայի նպատակը նոր տեղեկատվության արտադրությունն է, մարդու ունեցած տեղեկատվությունը վերլուծելու և ստացված վերջնարդյունքի հիման վրա որևէ գործունեության առնչությամբ ճիշտ որոշումների կայացումը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների մեջ ներառված հաղորդակցական տեխնոլոգիաներն ապահովում են տեղեկատվության հաղորդումը տարածության վրա: Տեղեկատվական տեխնոլոգիաները դա էլեկտրոնային գործընթացի ուսումնասիրումն ու օգտագործումն է տեղեկատվություն հավաքելու և պահպանելու ու այն հասանելի դարձնելու համար:

Տեղեկատվական տեխնոլոգիաներն իրենց մեջ ներառում են համակարգչային տեխնոլոգիաներ, ինչպիսիք են.

- ցանցային ծրագրավորումը (networking),
- համակարգչային սարքավորումները (hardware),
- համակարգչային ծրագրերը (software)
- ինտերնետը կամ այն մարդիկ, ովքեր աշխատում են այս տեխնոլոգիաների հետ:

SS աշխատանքներն իրենց մեջ ներառում են.

- համակարգչային ծրագրավորում,
- ցանցային ադմինիստրացիա,
- համակարգչային ինժեներինգ,
- վեբ մշակում,
- տեխնիկական աջակցություն և այլն:

Մասնագիտական կոմպիտենցիաների նկարագրում:

Մասնագիտական կոմպետենցիաների շրջանակը բացահայտելու համար քննարկումներ են իրականացվել ծրագրավորման ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնադիրների և գլխավոր մասնագետների հետ:

- դրսևորել մասնագիտության պատմության և հիմունքների իմացություն,
- հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
- ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվությունը,
- ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
- հասկանալ և օգտագործել քննադատական վերլուծության տեսությունների զարգացման մեթոդները,
- կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
- ցուցաբերել ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների որակի իմացություն:

Ընդհանրական կոմպիտենցիաների նկարագրում:

Ընդհանրական իմացությունների վերաբերյալ կատարված հարցումների արդյունքները վկայում են, որ գործատուները առավել կարևորում են թիմային աշխատանքը,

հաղորդակցման կարողությունը, վերլուծելու և համադրելու կարողությունը, ղեկավարման և կազմակերպչական հմտությունները, մասնագիտական էթիկայի ընկալումը:

Ընդհանրական կոմպետենցիաներն իրենց մեջ պարունակում են.

ա) Գործիքային կոմպետենցիաներ.

- վերլուծության և սինթեզելու կարողություն,
- կազմակերպչական կարողություն (պլանավորում, ղեկավարում, վերահսկում),
- հենքային և ընդհանուր գիտելիքների տիրապետում,
- մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
- պետական լեզվով հաղորդակցվելու կարողություն,
- տեղեկույթը կառավարելու հմտություն (տեղեկույթի ձեռք բերում, համակարգում, վերլուծում),
- տարբեր գործառույթների մոդելավորման կարողություն,
- խնդիրների լուծում,
- որոշումների ընդունում:

բ) Միջանձնային կոմպետենցիաներ.

- քննադատական վերլուծության և ինքնաքննադատման ունակություն,
- թիմային աշխատանք,
- միջանձնային ունակություններ,
- միջառարկայական թիմում աշխատելու ունակություն,
- այլ ոլորտների փորձագետների հետ շփվելու ունակություն,
- միջազգային միջավայրում աշխատելու ունակություն:

գ) Համակարգային կոմպետենցիաներ.

- գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
- հետազոտություններ կատարելու ունակություններ,
- սովորելու ունակություն,
- նոր իրավիճակներին հարմարվելու ունակություն,
- նոր գաղափարներ առաջ քաշելու (ստեղծագործելու) ունակություն,
- ինքնուրույն աշխատելու ունակություն,
- նախագծեր մշակելու և դրանք կառավարելու ունակություն,
- նախաձեռնողականություն և ձեռներեցություն,
- որակի կարևորության գիտակցում,
- հաջողության ձգտում:

Մասնագիտական և ընդհանրական իմացություններից բացի, որոնք արդեն իսկ նշված են, կարևորվում է նաև այնպիսի կոմպետենցիաներ, որոնք բխում են միջազգային պրակտիկայից և գլխավոր մասնագետների (ծրագրավորողների) աշխատանքային պարտականություններից՝

- Շարունակական մասնագիտական զարգացման ձիրքը,
- Կամայական նշանակության ծրագրերի կազմման կարողությունը,
- Պատճառ մակարդակով գեկուցելու ունակությունը,
- Թիմային աշխատանք ղեկավարելու կարողությունը,
- Ձեռնարկատիրական հմտությունները,

- Կառավարչական օպտիմալ համակարգերի ներդրման, իրագործման և հաշվետվությունների կազմման կարողությունը,
- Պլանավորում և վերահսկողության հմտությունը:

Ծրագրի շրջանավարտը պետք է կարողանա.

- դրսևորել մասնագիտության պատմության և հիմունքների իմացություն,
- հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
- ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
- հասկանալ և օգտագործել քննադատական վերլուծության տեսությունների զարգացման մեթոդները,
- կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
- ցուցաբերել ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների որակի իմացություն,
- հասկանալ գիտական տեսությունների ստուգման փորձարարական և դիտարկիչ միջոցների արդյունքները:

Երկրորդ փուլում շրջանավարտները պետք է ունակ լինեն ինքնուրույն կատարելու գիտական հետազոտություններ և ընդհանուր առմամբ ենթադրվում է, որ շրջանավարտները պետք է.

- դրսևորեն ժամանակակից խոր գիտելիքներ մասնագիտական ոլորտում,
- գնահատեն տեսության և պրակտիկայի նորագույն ձեռքբերումները,
- տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,
- ունակ լինեն փոքր ներդրում կատարելու տվյալ առարկայական ոլորտում,
- ցուցաբերեն ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում տվյալ առարկայական ոլորտում գործունեություն ծավալելիս,

11. Փորձուսուցման տեսակները և վայրը.

Ծրագրի ուսանողներն ունեն հնարավորություն անցկացնելու իրենց փորձուսուցումն տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող առաջատար կազմակերպություններում, ներքին վերահսկողական ծառայությունում, որոնց հետ առկա են համապատասխան ԱրՊՀ համագործակցության պայմանագրեր:

Մասնագիտական փորձուսուցումները նախատեսվում է 8-րդ կիսամյակում: **Ուսումնական** փորձուսուցումը նախատեսվում է անցկացնել ԱրՊՀ-ում, Շուշիի տեխնոլոգիական համալսարանում, Երևանի ճարտարապետական համալսարանում 4 շաբաթ տևողությամբ, իսկ **արտադրականը**՝ “Սիներջի սիստեմս”, “Ղարաբաղ Տեխնոլոգի”, “Կապիտալսոֆտ”, “Ինստիգեյտմոբայլ” ընկերություններում 4 շաբաթ տևողությամբ:

12. Աշխատանքային հնարավորությունը.

Շրջանավարտները կարող են աշխատել տարբեր կազմակերպություններում, որպես՝ գլխավոր մասնագետ, հաշվետար-օպերատոր, ֆինանսավարկային հաստատություններում՝ ադմինիստրատոր-օպերատոր, ավտոմատացման համակարգերով զբաղ-

վող ընկերություններում՝ ՏՏ մասնագետ կամ խորհրդատու, ինչպես նաև զբաղեցնել այլ պաշտոններ, որոնք առնչվում են տեղեկատվության հավաքագրմանը, մշակմանը և վերլուծությանը:

13. Գնահատումը.

Գնահատման հիմնարար սկզբունքը ուսանողակենտրոն մոտեցումն է:

Գնահատման համակարգը հիմնված է ուսանողի կողմից կրթական վերջնարդյունքի յուրացման արժևորման վրա:

Գնահատման համակարգում կարևորվում է ուսանողի հմտությունները և կարողությունները՝ տեսությունը գործնականում օգտագործելու ունակությունը, պրակտիկ մտածողությունը, վերլուծական կարողությունները և ոչ ստանդարտ իրավիճակներում որոշումներ կայացնելու կարողությունը, սեփական դատողությունների և գնահատումների կատարումը: Դասավանդման մեթոդներից ելնելով՝ կարող են կիրառվել գնահատման տարբեր ձևեր:

Գնահատումը հավաստում է ուսանողի կողմից ծրագրի, մոդուլի և դրա բաղադրիչներին հատկացված կրթական վերջնարդյունքի յուրացումը, որի համար նրան տրվում են համապատասխան կրեդիտներ:

Գնահատման սկզբունքներն են՝

- տեղեկացվածությունը,
- կիրառելիությունը,
- արդյունավետությունը,
- գնահատման ձևի համապատասխանությունը դասավանդման մեթոդին և կրթական վերջնարդյունքին,
- գիտելիքի կուտակման, առաջխաղացման և մասնագիտական աճի գնահատումը:

Գնահատման ընթացքում ուսանողի թույլ տված սխալների և բացթողումների բացահայտում, անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում:

Գնահատումը կատարվում է գնահատման գործոնների կշիռներով տրվող միավորների միջոցով:

Կրթական ծրագրի վերջնարդյունքների ձեռքբերման հավաստիությունը՝ ըստ դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների համապատասխանության / **տե՛ս Հավելված 3/:**

14. Ռեսուրսային ապահովվածությունը.

Ռեսուրսային ապահովվածությունը բազմագործոն է: ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ են լսարանային պայմաններ, համապատասխան պրոֆեսորադասախոսական անձնակազմ, համակարգչային սրահ, պրոյեկտորով կահավորված լսարաններ, մասնագիտական գրականության առկայություն համալսարանի գրադարանում: Մասնագիտական գրականության շրջանակը ուղղակիորեն բխում է դասընթացների ծրագրերում նշվող անհրաժեշտ և պարտադիր գրականությունից:

Ամբիոնը ունի տեղեկատվական որակական և քանակական ռեսուրսների բավարար ներուժ, նյութատեխնիկական բազա:

Դասախոսական կազմի տվյալների բազան՝ նրանց գիտական աստիճանների, կոչումների և որակավորումների վերաբերյալ, տեղեկատվական ռեսուրսների որակի և քանակի, նյութատեխնիկական բազայի տվյալները ներկայացված են / **Հավելված 4/:**

1. Կրթության հետագա հնարավորությունները՝

Սույն կրթական ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց հետագա կրթությունը մագիստրոսական ծրագրով, իսկ հետագայում ասպիրանտուրայում՝ ըստ ԱՀ ՈԱՇ-ի համապատասխան մակարդակների:

2. Մասնագիտության նկարագրի ձևակերպումը

Ծրագրի շրջանավարտը պետք է կարողանա.

- դրսևորել մասնագիտության պատմության և հիմունքների իմացություն,
- հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
- ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
- հասկանալ և օգտագործել քննադատական վերլուծության տեսությունների զարգացման մեթոդները,
- կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
- ցուցաբերել ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների որակի իմացություն,
- հասկանալ գիտական տեսությունների ստուգման փորձարարական և դիտարկիչ միջոցների արդյունքերը:

Երկրորդ փուլում շրջանավարտները պետք է ունակ լինեն ինքնուրույն կատարելու գիտական հետազոտություններ և ընդհանուր առմամբ ենթադրվում է, որ շրջանավարտները պետք է.

- դրսևորեն ժամանակակից խոր գիտելիքներ մասնագիտական ոլորտում,
- գնահատեն տեսության և պրակտիկայի նորագույն ձեռքբերումները,
- տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,
- ունակ լինեն փոքր ներդրում կատարելու տվյալ առարկայական ոլորտում,
- ցուցաբերեն ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում տվյալ առարկայական ոլորտում գործունեություն ծավալելիս:

Ծրագրի ավարտին շրջանավարտին տրվում է *ինֆորմատիկայի բակալավրի որակավորում՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտությամբ:*

«Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտությամբ ինֆորմատիկայի բակալավրի պատրաստումն ապահովող հիմնական կրթական ծրագրի մշակման համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերն են.

- «Կրթության մասին» ԼՂՀ օրենքը.
- «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենքը.
- «ԼՂՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ԼՂՀ Կառավարության 2008թ. մայիսի 6-ի N 338 որոշումը.
- «ԼՂՀ-ում կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2001թ. մարտի 6-ի N 52 որոշման մեջ փոփոխություն

կատարելու մասին» ԼՂՀ կառավարության 2011թ. հունիսի 21-ի N 410-Ն որոշումը.

- «ԼՂՀ կրթության որակավորումների շնորհման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ Կառավարության 2013թ. ապրիլի 25-ի N944-Ն որոշումը.
- Նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության 2013թ. սեպտեմբերի 25-ի N 656-Ն որոշումը.
- ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N277/Մ հրամանը.
- «ԱՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» ԱՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 5-ի N235-Ն որոշումը.
- ԱրՊՀ կանոնադրությունը.
- «Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»/ԱրՊՀ գիտական խորհրդի 2014թ. հունիսի 19-ի N27-Լ որոշումը
- «Արցախի պետական համալսարան ՊՈԱԿ-ի կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերնայման ընթացակարգը հաստատելու մասին» 2014թ. հոկտեմբերի 7-ի N45-Լ որոշումը
- ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագիրը /2019-2023թթ./.
- «ԱրՊՀ բակալավրի կրթական կառուցվածքի և բովանդակության ծրագրի կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի 2019 թվականի հունիսի 28-ի N6-Լ որոշումը.
- «Մասնագիտության կրթական ծրագրի» ձևաչափը լրացնելու մեթոդական ցուցումները հաստատելու մասին ԱրՊՀ գիտական խորհրդի 2019 թվականի հունիսի 28-ի N5-Լ որոշումը.
- «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտության ուսումնական պլանը /2019-2023թթ./.
- «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական մասնագրերը:

3.Նոր ծրագրի ներմուծման

(կամ գոյություն ունեցող ծրագրի վերանայման) հիմնավորումը

061105.01.6 «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել մասնագիտական կոմպետենցիաներ, որոնք անհրաժեշտ են ապագայում մասնագիտական հաջող գործունեության, ինչպես նաև ուսումնառության հաջորդ փուլերում կրթությունը շարունակելու համար:

Ծրագրում ներգրավված դասախոսները վարում են ակտիվ գիտական և գործնական աշխատանք, մասնակցում են հետազոտական նախագծերի աշխատանքներին և պարբերաբար բարձրացնում իրենց որակավորումը:

Ծրագիրն ապահովված է նաև անհրաժեշտ ենթակառուցվածքներով և նյութական ռեսուրսներով՝ դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների անցկացման համար նախատեսված լսարաններով, լաբորատորիաներով, որոնք կահավորված են ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներով և ունեն ինտերնետային կապ:

Ծրագիրը բավարար չափով ապահովված է նաև անհրաժեշտ ուսումնական ռեսուրսներով՝ ուսումնական գրականությամբ (նաև էլեկտրոնային տարբերակով), մեթոդական ձեռնարկներով, դասախոսական տեքստերով (էլեկտրոնային տարբերակով), օժանդակ նյութերով և գիտական պարբերականներով:

Կրթական ծրագրի նպատակն է ուսանողներին տալ այնպիսի իմացություն, որն անհրաժեշտ և բավարար կլինի աշխատաշուկայում մրցունակ առաջարկ ձևավորելու համար: Այս նպատակից ելնելով, մեր կողմից խնդիր է դրվել որպեսզի «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ» մասնագիտությամբ բակալավրի որակավորում ստացած շրջանավարտը, ելնելով մասնագիտական գործունեության վերջնաարդյունքներից.

Գիտենա՝

- տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնական բաժինները, կարողանա օգտվել գիտական և մեթոդական գրականությունից,
- տարբեր բնագավառներից կիրառական խնդիրների լուծման հիմնական ալգորիթմները,
- ծրագրավորման ժամանակակից լեզուները,
- լոկալ և գլոբալ ցանցերի կազմակերպման հիմնական սկզբունքները,
- համակարգչի աշխատանքի սկզբունքները,
- տարբեր տիպի ու բնույթի տվյալների ներկայացման եղանակները, համակարգային ցանցերի կազմակերպման եղանակներն ու հարմարանքների կազմը:

Կարողանա՝

- մոդելավորել տարբեր գործընթացներ,
- կատարել տվյալների որոնում և օգտագործել դրանք,
- ծրագրավորել տարբեր ծրագրավորման լեզուներով,
- աշխատել կիրառական ծրագրային փաթեթների հետ,
- աշխատել տարբեր տեղեկատվական համակարգերում,
- մասնագիտական հայտնի մեթոդները կիրառել տարբեր բնագավառների խնդիրների լուծման համար:

Տիրապետի՝

- բնագավառի հիմնական մեթոդներին,
- ծրագրավորման ժամանակակից լեզուներին,
- կիրառական խնդիրների լուծման եղանակներին և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին:

«Տեղեկատվական տեխնոլոգիաներ» կրթական ծրագիրը լիապես համապատասխանում է ԱրՊՀ առաքելությանը՝ լինելով բնագիտության ֆակուլտետի ռազմավարության իրացման հիմնական ծրագրերից մեկը:

Գոյություն ունեցող ծրագրի վերանայումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԱրՊՀ-ն, 2019թ. ընդունելով 2019-2023 թթ. ռազմավարական ծրագիրը, առաջնա-

հերթորեն կարևորում էր կրթական ծրագրերի վերակառուցման և դրանց՝ ԱՀ ՈԱՇ-ին համապատասխանեցման խնդիրը /տե՛ս ՌԾ, էջ 13, Խնդիր 1.1/:

Մինչ այդ՝ ուսումնական պլանի փոփոխությունն իրականացվում էր համաձայն ամբիոնի ամենամյա քննարկումների արդյունքում ձևավորված առաջարկությունների, որ ներկայացվում և հաստատվում էր բուհի գիտական խորհրդում:

ԱրՊՀ ռազմավարական ծրագրի Նպատակ 1, խնդիր 1.1-ից բխում և ենթադրվում էր ունենալ վերակառուցված կրթական ծրագիր՝ ԱՀ ՈԱՇ-ին համադրելի վերջնարդյունքներով, իրականացման համապատասխան քայլերով տեսանելի:

4. Աշխատաշուկայի վերլուծություն:

Մասնագիտական կոմպետենցիաների նկարագրում

«Տեղեկատվական տեխնոլոգիաներ» կրթական ծրագիրը մշակելիս կարևորվել են արտաքին փորձագետների և ներքին շահակիցների կարծիքները, իրականացվել են քննարկումներ/ **տե՛ս Հավելված Բ. ՖԽ արձանագրություններ /**: Ուսումնասիրվել են նաև վերջին 4 տարիների ընդունելության արդյունքները, որոշարկվել ԱրՊՀ դիմորդների թվում *Տեղեկատվական տեխնոլոգիաներ* մասնագիտությունն ընտրած դիմորդների բաժնեմասը:

Ըստ՝ որի

| | 2016-2017 | 2017-2018 | 2018-2019 | 2019-2020 |
|--|-------------|-------------|--------------|------------|
| ԱրՊՀ ընդունվածների թիվը | 640 | 483 | 345 | 719 |
| Առկա | 487 | 378 | 274 | 578 |
| Հեռակա | 153 | 105 | 71 | 141 |
| Տեղեկատվական տեխնոլոգիաներ մասնագիտություն ընտրողների թիվը | 30 | 31 | 45 | 43 |
| Առկա | 30 | 31 | 29 | 31 |
| Հեռակա | - | - | 16 | 12 |
| Տեղեկատվական տեխնոլոգիաներ մասնագիտություն ընտրողների բաժնեմասը | 4.6% | 6.4% | 13% | 6% |
| Առկա | 6.1% | 8.2% | 10.5% | 5.3% |
| Հեռակա | - | - | 22.5% | 8.5% |

ԱրՊՀ նոր ՄԿԾ-ները (Տեղեկատվական տեխնոլոգիաներ մասնագիտության) մշակելիս կարևորվում են արտաքին փորձագետների կարծիքը և մասնավորապես դրանք փորձագիտական քննության են հղվում արտաքին շահակիցներին՝ ՀՀ ԵՊՃՀ, Վանաձորի պետական մանկավարժական համալսարան և ներքին շահակիցներին՝ ՇՏՀ, Ստեփանակերտի Մ.Մաշտոց համալսարան, Ստեփանակերտի Գ. Նարեկացի

համալսարան և Ստեփանակերտում գործող “Միներջի սիստեմա”, “Ղարաբաղ Տելեկոմ”, “Կապիտալսոֆտ”, “Ինստիտուտնոբայլ” ընկերությունները:

5. Մրցակցային դիրքը

Ուսումնասիրվում են Հայաստանի այլ բուհերում իրականացվող նման կրթական ծրագրերը և արտաքին (ազգային, միջազգային) էտալոնային կողմնորոշիչ պահանջները (benchmarks) տվյալ մասնագիտության համար:

- ԵՊՀ (Հայաստանի Հանրապետություն)
- ՎՊՀ (Հայաստանի Հանրապետություն)
- ՀՊՃՀ (Հայաստանի Հանրապետություն)
- Հայ-ռուսական սլավոնական համալսարան՝ ՀՌՍՀ (Հայաստանի Հանրապետություն)
- Нижегородский гос. унив. (Ռուսաստանի Հանրապետություն)
- Уральский гос. унив. (Ռուսաստանի Հանրապետություն)
- МИРЭА - Российский технологический университет. (Ռուսաստանի Հանրապետություն)

Արցախի պետական համալսարանը 2005 թվականից ընդգրկվեց Բոլոնյան գործընթացում, և լինելով ու կրթական իրողություններով համապատասխանելով ՀՀ համանուն դաշտին՝ իբրև հենանիշ ընդունեց նախ՝ ՀՊՃՀ, ապա՝ ՀՌՍՀ-ի և ՎՊՀ-ի կրթական ծրագրերը: Հիմնական առանցքային կրթական ծրագրերը մշակվեցին ՀՀ բուհերի ծրագրային չափորոշիչների և պահանջների հիման վրա՝ հաշվառելով արցախյան կրթական իրականության պահանջները, ինչի արդյունքում խթանվել է ԱրՊՀ ուսանողների արտահամալսարանական շարժունությունը և ուսանողը, ԱՀ-ից ՀՀ բուհ տեղափոխվելով, խոչընդոտներ չեն առաջացել:

ԱրՊՀ կրթական ծրագրերը մշտապես վերանայվում ու մշակվում են ՀՀ բուհերի համապատասխան փորձի մշտադիտարկման արդյունքում, քանի որ մատուցվող կրթական ծառայությունները, ԱՀ հատուկ կարգավիճակից ելնելով, նախ և առաջ պետք է համադրելի և փոխձանաչելի լինեն ՀՀ բուհական տարածքում: ԱրՊՀ կրթական ծառայությունների միջազգայնացման հնարավորությունը և միջազգային փոխանակման ծրագրերը ներկայումս միջնորդավորված են ՀՀ կրթական տարածքով:

6. Ծրագրի նպատակները և խնդիրները

Կրթական ծրագրի նպատակն է.

1. Ուսանողներին տրամադրել տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի ոլորտի հիմնարար գիտելիք՝ ապագա մասնագիտական գործունեությանը համապատասխան:

2. Խթանել ուսանողների ստեղծագործական մտածողությունը, զարգացնել վերլուծական կարողությունները:

3. Օժտել ըստ իրադրության խնդիրներ առաջադրելու և ինքնուրույն լուծումներ գտնելու, դրանց իրացումն ապահովելու կարողություններով:

«Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտությամբ բակալավրը կախված մասնագիտական գործունեության տեսակից, պետք է պատրաստ լինի լուծելու հետևյալ մասնագիտական խնդիրները.

1. Նախագծա-կոնստրուկտորական գործունեություն՝

- մասնագիտական գործունեության օբյեկտների նախագծման, նախագծային լուծումների և սահմանափակումների նպատակների որոշում,

-առարկայական տիրույթի և տեխնիկական միջոցների վերլուծություն,

-հաշվողական համալիրների և ավտոմատացված համակարգերի մաթեմատիկական, լեզվաբանական, ինֆորմացիոն և ծրագրային ապահովման նախագծում ժամանակակից մեթոդների, միջոցների և նախագծման տեխնոլոգիաների հիման վրա,

-տնտեսական արդյունավետության հաշվարկ:

2. Արտադրա-տեխնոլոգիական գործունեություն

- ավտոմատացված համակարգերի ստեղծում և կիրառական ծրագրային միջոցների տրված որակի և տրված ժամկետում արտադրում:

3. Գիտահետազոտական գործունեություն՝

- երևույթների, գործընթացների և համակարգերի մաթեմատիկական մոդելների ընտրությունը և ձևափոխումը արդյունավետ ծրագրա-ապարատային իրականացման և ՀՏ-ի միջոցներով նրանց հետազոտման նպատակով,

- մաթեմատիկական մոդելների, մեթոդների, համակարգչային տեխնոլոգիաների և գիտական հետազոտություններում, նախագծա-կոնստրուկտորական գործունեությունում, տեխնոլոգիական, տնտեսական, սոցիալական և մարդկային գործունեության հումանիտար ոլորտների կառավարման մեջ վճիռների կայացման համակարգերի մշակում,

- մեթոդների, ալգորիթմների, ծրագրերի, ապարատա-ծրագրային համալիրների և համակարգերի վերլուծություն, տեսական և փորձնական հետազոտում,

-մասնագիտական գործունեության օբյեկտների գործարկման հետ կապված հաշվողական և տեղեկատվական գործընթացների մաթեմատիկական և ծրագրային մոդելների ստեղծում և հետազոտում,

-ծրագրա-ապարատային համալիրների հետազոտման պլանների, ծրագրերի և մեթոդների մշակում,

-մասնագիտական գործունեության օբյեկտների գործարկման գործընթացների որակի վերլուծության, սինթեզի, օպտիմալացման և կանխատեսման մեթոդիկայի մշակում և հետազոտում,

4. Կազմակերպա-կառավարչական գործունեություն

- մասնագիտական գործունեության օբյեկտների տրված որակի և տրված ժամկետում մշակման գործընթացի կազմակերպում,
- մասնագիտական գործունեության օբյեկտների մշակող կոլեկտիվի աշխատանքի կազմակերպում, մշակողների և պատվիրատուի, ինչպես նաև տարբեր մասնագիտությունների մշակողների, փոխգործունեության կազմակերպում, տարակարծության պայմաններում կառավարչական վճիռների կայացում,
- երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորման դեպքում տարբեր պահանջների (արժեք, որակ, կատարման ժամկետներ) միջև փոխզիջումային լուծումների գտնում և ընդունելի վճիռների որոնում,
- մասնագիտական գործունեության օբյեկտների մշակման պլանավորում,
- մասնագիտական գործունեության օբյեկտների մշակման գործընթացի գնահատում, հսկում և կառավարում,
- մասնագիտական գործունեության օբյեկտների մշակման գործընթացի կազմակերպման ժամանակ տեխնոլոգիայի, գործիքային միջոցների և ՀՏ միջոցների ընտրություն,
- մասնագիտական գործունեության օբյեկտների մշակման գործընթացի ընդունված կազմակերպման շրջանակներում անձնակազմի ուսուցում:

5. Շահագործման գործունեություն

- ավտոմատացված համակարգերի համակարգային, գործիքային և կիրառական ծրագրային ապահովման տեղադրում և սպասարկում,
- փորձնական և արտադրական շահագործման օբյեկտի ներդրման կազմակերպում,

Հիմնվելով 1.10 կետի պահանջներին, իրականացնել համառոտ վերլուծություն:

Կրթական ծրագրով սահմանված են կրթական արդյունքները, որոնց ձեռքբերումը կապահովի ծրագրի նպատակայնության իրացումը.

Ընդհանրական փոխանցելի կարողություններ/նշվում է՝ Ը/

Ը1 ցուցաբերեն ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում տվյալ առարկայական ոլորտում գործունեություն ծավալելիս

Ը2 Տիրապետել տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

Ը3 հետազոտություններ կատարելու և նոր իրավիճակներին հարմարվելու ունակություն,

Ը4 նոր գաղափարներ առաջ քաշելու (ստեղծագործելու) ունակություն, առաջնորդի հատկություններ

Ը5 ինքնուրույն աշխատելու ունակություն, տեղեկատվական ռազմավարական քաղաքականության մշակում և գնահատում

- Ը6** նախագծեր մշակելու և դրանք կառավարելու ունակություն, նախաձեռնողականություն և ձեռներեցություն,
- Ը7** որակի կարևորության գիտակցում և հաջողության ձգտում
- Մասնագիտական գիտելիք և իմացություն/նշվում է՝ Մ/**
- Մ1** Վերլուծելու, սինթեզելու, կազմակերպելու և պլանավորելու ունակություններ,
- Մ2** Մասնագիտական ոլորտի հենքային և ընդհանուր գիտելիքների հիմունքների իմացություն,
- Մ3** Մայրենի լեզվով բանավոր և գրավոր հաղորդակցություն, երկրորդ օտար լեզվի իմացություն,
- Մ4** Տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն),
- Մ5** Վերլուծելու և խնդիրներ լուծելու կարողություն
- Մ6** Միջավայրի հետ հաղորդակցման կարողություն, քննադատական վերլուծության և ինքնաքննադատման ունակություն, թիմային աշխատանք,
- Մ7** Այլ ոլորտների փորձագետների հետ շփվելու ունակություն,
- Մ8** Կատարված աշխատանքը պատշաճ ներկայացնելու և գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններ
- Մ9** Ճկուն մտածողության՝ ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու և լուծումներ առաջադրելու կարողություն
- Մ10** Մասնակի իրավիճակում իրավական ակտերի կիրառման պահանջների որոշման կարողություն,
- Մ11** Դրսևորել մասնագիտության պատմության և հիմունքների իմացություն,
- Մ12** Ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
- Մ13** Հասկանալ և օգտագործել քննադատական վերլուծության տեսությունների զարգացման մեթոդները,
- Մ14** Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը, նշանակությունն ու գործառույթները հասկանալ և ցուցաբերել ստացված հենքային գիտելիքները վերլուծելու կարևորությունը ընկալելու ունակություն
- Մ15** Ցուցաբերել ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների որակի իմացություն,

Մ16 Հասկանալ գիտական տեսությունների ստուգման փորձարարական և դիտարկիչ միջոցների արդյունքները:

Մ17 Դրսևորել ժամանակակից խոր գիտելիքներ մասնագիտական ոլորտում (նորագույն տեսությունների, դրանց մեկնաբանությունների, մեթոդների և եղանակների իմացություն),

Մ18 Քննադատորեն գնահատեն և մեկնաբանեն տեսության և պրակտիկայի նորագույն ձեռքբերումները,

Մ19 Տիրապետել ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանալ մեկնաբանել հետազոտության արդյունքները,

Մ20 Ունակ լինել ինքնուրույն, թեկուզ և փոքր ներդրում կատարելու տվյալ առարկայական ոլորտում,

7.Փորձուսուցման կազմակերպումը

Համաձայն բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչների՝ յուրաքանչյուր մասնագիտության համար պրակտիկայի մասնագիտական պլանները և ծրագրերը մշակվում, հաստատվում են այն ամբիոնների կողմից, որոնք մասնակցում են պրակտիկայի կազմակերպմանը և պետք է նորացվեն յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ:

Ուսանողների պրակտիկայի կազմակերպումն իրականացվում է համալսարանի ղեկավարության, ամբիոնի վարիչների, պրակտիկայի ղեկավարների, ընդունող հաստատությունների պրակտիկաների ղեկավարների կողմից:

Պրակտիկաների կազմակերպման պահանջներն են՝

Ուսուցման ընթացքում առանձին մասնագիտական դասընթացների և ընտրած մասնագիտացման գծով գործնական ունակությունների, ապագա աշխատավայրում հմտություններ և փորձառումներ ձեռք բերելու նպատակով բնագավառի կազմակերպաիրավական տարբեր ձևերի կազմակերպություններում, հիմնարկներում և հաստատություններում կազմակերպվում են ուսանողների արտադրական և նախալսարտական պրակտիկաներ:

Ուսանողի պրակտիկաները մասնագիտության ուսումնական պլանի պարտադիր բաղադրիչներն են, որոնց կազմակերպման և իրականացման պատասխանատուն բուհն է: Նախավարտական պրակտիկան կազմակերպվում է այն հաշվով, որպեսզի շրջանավարտը կարողանա այդ ընթացքում ստացած փորձառությունը օգտագործել իր ավարտական աշխատանքը ձևավորելիս: Եթե շրջանավարտը ուսուցումը համատեղում է աշխատանքի հետ, բուհն իրավունք ունի թույլատրել աշխատավայրում պրակտիկայի անցկացումը, եթե շրջանավարտի աշխատանքի բնույթը համապատասխանում է բուհում ուսումնառած մասնագիտությանը:

Պրակտիկան կարող է կազմակերպվել նաև որոշակի կազմակերպությունում՝ նախապես կազմված անհատական ծրագրով, եթե շրջանավարտը նույն կազմակերպությունում պաշտոն է զբաղեցնում:

Արտադրական պրակտիկայի տեղերի բացակայության դեպքում բուհը (ֆակուլտետը) այն կազմակերպում է սեփական նյութատեխնիկական բազայի վրա, եթե այն հագեցված է ժամանակակից սարքավորմամբ և ծրագրային միջոցներով:

Արտադրա-տեխնոլոգիական պրակտիկան անց է կացվում մասնագիտության պրոֆիլի կողմնակի կազմակերպություններում (հիմնարկներում, կազմակերպություններում) կամ բարձրագույն ուսումնական հաստատության թողարկող ամբիոններում և գիտական լաբորատորիաներում: Պրակտիկաների բովանդակությունը որոշվում է բարձրագույն ուսումնական հաստատության թողարկող ամբիոնների կողմից, հաշվի առնելով այն ստորաբաժանումների (արտադրամաս, բաժին, լաբորատորիա, գիտական խումբ և այլն) հետաքրքրություններն ու հնարավորությունները, որոնցում այն անց է կացվում և ռեզլամենտավորվում է համապատասխան ծրագրով:

Արտադրա-տեխնոլոգիական պրակտիկայի նպատակը տեսական ուսուցման գործընթացում ստացած գիտելիքների և ունակությունների ամրապնդումն է: Արտադրա-տեխնոլոգիական պրակտիկայի ժամանակ ուսանողը պետք է

1) ուսումնասիրի՝

- ա. ստորաբաժանման գործունեության կազմակերպումն ու կառավարումը;
- բ. արտադրվող, մշակվող կամ կիրառվող տեխնիկայի հարցերը, արտադրանքի իրացման կամ ծառայությունների մատուցման ձևերն ու մեթոդները;
- գ. գործող չափորոշիչները, տեխնիկական պայմանները, պաշտոնավարական

պարտականությունները, ՀՏ միջոցների, արտաքին և կապող սարքավորումների շահագործման, փորձարկումների ծրագրերի, տեխնիկական փաստաթղթերի ձևակերպման դրույթներն ու ցուցումները;

- դ. ստորաբաժանումում եղած ՀՏ միջոցների, հետազոտական սարքավորումների, չափիչ սարքերի կամ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման կանոնները, ինչպես նաև նրանց սպասարկումը;
- ե. կենսագործունեության անվտանգության ապահովման, և բնապահպանական մաքրության հարցերը;

2) յուրացնի՝

- ա. ուսումնասիրվող ՀՏ միջոցների ապարատային և ծրագրային ապահովման տեխնիկական մակարդակի վերլուծության մեթոդները, որոշելու համար նրանց համապատասխանությունը գործող տեխնիկական պայմաններին և չափորոշիչներին;
- բ. չափիչ տեխնիկայի կիրառման մեթոդիկաները, կիրառվող ՀՏ միջոցների առանձին բնութագրերի հսկման և ուսումնասիրման համար;
- գ. համակարգչային մոդելավորման և մասնագիտական գործունեության օբյեկտների նախագծման առանձին ծրագրային փաթեթներ;
- դ. մասնագիտական պատրաստման ուղղությամբ պարբերական, ռեֆերատիվ և տեղեկատվական հրատարակումներից օգտվելու կարգը:

Պրակտիկայի արդյունքների ատեստավորումը անց է կացվում, սահմանված պահանջներին համապատասխան ձևակերպված, գրավոր հաշվետվության և կազմակերպության կողմից պրակտիկայի ղեկավարի կարծիքի հիման վրա: Ատեստացիայի արդյունքներով նշանակվում է գնահատական (գերազանց, լավ, բավարար):

8.Ծրագրի կրթական վերջնարդյունքները
Մասնագիտության կրթական ծրագրի վերջնարդյունքները

| Ընդհանրական | |
|-------------|--|
| Ը1 | ցուցաբերեն ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում տվյալ առարկայական ոլորտում գործունեություն ծավալելիս |
| Ը5 | ինքնուրույն աշխատելու ունակություն, տեղեկատվական ռազմավարական քաղաքականության մշակում և գնահատում |

| | | | |
|---------------------|--|------------|---|
| Ը2 | Տիրապետել տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին: | Ը6 | նախագծեր մշակելու և դրանք կառավարելու ունակություն, նախաձեռնողականություն և ձեռներեցություն, |
| Ը3 | հետազոտություններ կատարելու և նոր իրավիճակներին հարմարվելու ունակություն, | Ը7 | որակի կարևորության գիտակցում և հաջողության ձգտում |
| Ը4 | նոր գաղափարներ առաջ քաշելու (ստեղծագործելու) ունակություն, առաջնորդի հատկություններ | | |
| Մասնագիտական | | | |
| Մ1 | Վերլուծելու, սինթեզելու, կազմակերպելու և պլանավորելու ունակություններ, | Մ11 | դրսևորել մասնագիտության պատմության և հիմունքների իմացություն, |
| Մ2 | մասնագիտական ոլորտի հենքային և ընդհանուր գիտելիքների հիմունքների իմացություն, | Մ12 | ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն, |
| Մ3 | մայրենի լեզվով բանավոր և գրավոր հաղորդակցություն, երկրորդ օտար լեզվի իմացություն, | Մ13 | հասկանալ և օգտագործել քննադատական վերլուծության տեսությունների զարգացման մեթոդները, |
| Մ4 | տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն), | Մ14 | Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը, նշանակությունն ու գործառնությունները հասկանալ և ցուցաբերել ստացված հենքային գիտելիքները վերլուծելու կարևորությունը ընկալելու ունակություն |
| Մ5 | Վերլուծելու և խնդիրներ լուծելու կարողություն | Մ15 | ցուցաբերել ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների որակի իմացություն, |
| Մ6 | Միջավայրի հետ հաղորդակցման կարողություն, քննադատական վերլուծության և ինքնաքննադատման ունակություն, թիմային աշխատանք, | Մ16 | հասկանալ գիտական տեսությունների ստուգման փորձարարական և դիտարկիչ միջոցների արդյունքները: |
| Մ7 | Այլ ոլորտների փորձագետների հետ շփվելու ունակություն, | Մ17 | դրսևորել ժամանակակից խոր գիտելիքներ մասնագիտական ոլորտում (նորագույն տեսությունների, դրանց մեկնաբանությունների, մեթոդների և եղանակների իմացություն), |
| Մ8 | Կատարված աշխատանքը պատշաճ ներկայացնելու և գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններ | Մ18 | քննադատորեն գնահատեն և մեկնաբանեն տեսության և պրակտիկայի նորագույն ձեռքբերումները, |
| Մ9 | Ճկուն մտածողության ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու և լուծումներ առաջադրելու կարողություն | Մ19 | Տիրապետել ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանալ մեկնաբանել հետազոտության արդյունքները, |
| Մ10 | Մասնակի իրավիճակում իրավական ակտերի կիրառման պահանջների որոշման կարողություն, | Մ20 | ունակ լինել ինքնուրույն, թեկուզ և փոքր ներդրում կատարելու տվյալ առարկայական ոլորտում, |

**“Տեղեկատվական տեխնոլոգիաներ” մասնագիտության բակալավրի կրթական
ծրագրի ուսումնական պլանի քարտեզ**

| h/h | Դասընթացներ | Մասնագիտական | | | | | | | | | | | | | | | | | | Ընդհանրական | | | | | | | | | |
|--------------------------------|-------------|---|----|----|----|----|----|----|----|----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-------------|-----|----|----|----|----|----|----|----|--|
| | | Մ1 | Մ2 | Մ3 | Մ4 | Մ5 | Մ6 | Մ7 | Մ8 | Մ9 | Մ10 | Մ11 | Մ12 | Մ13 | Մ14 | Մ15 | Մ16 | Մ17 | Մ18 | Մ19 | Մ20 | Ը1 | Ը2 | Ը3 | Ը4 | Ը5 | Ը6 | Ը7 | |
| Պարտադիր դասընթացներ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0518 | B90 | Հայոց լեզու և խոսքի մշակույթ 1 | | | * | | | | * | | | | | | | | | | | | | * | * | | | | * | | |
| 0518 | B91 | Հայոց լեզու և խոսքի մշակույթ 2 | | | * | | | | * | | | | | | | | | | | | | * | * | | | | * | | |
| 0310 | B01 | Հայոց պատմության հիմնահարցեր 1 | | | | | * | | * | | | | | | | | | | | | | | | | | | * | | |
| 0310 | B02 | Հայոց պատմության հիմնահարցեր 2 | | | | | * | | * | | | | | | | | | | | | | | | | | | * | | |
| 0520 | B74 | Օտար լեզու 1 | | | * | | | | * | | | | | | | | | | | | | * | * | | | | | | |
| 0520 | B75 | Օտար լեզու 2 | | | * | | | | * | | | | | | | | | | | | | * | * | | | | | | |
| 0520 | B76 | Օտար լեզուն մասնագիտական ոլորտում | | | * | | | | * | | | | | | | | | | | | | * | * | | | | | | |
| 0519 | B46 | Ռուսաց լեզու 1 | | | * | | | | | | | | | | | | | | | | | * | | | | | * | | |
| 0519 | B47 | Ռուսաց լեզու 2 | | | * | | | | | | | | | | | | | | | | | * | | | | | * | | |
| 0105 | B38 | Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ | | | | | * | | | | * | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0416 | B11 | Քաղաքացիական պաշտպանության | | | | | | * | * | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0105 | B31 | Արտակարգ իրավիճակներում առաջին բուժ. օգնություն | | | * | | | | | * | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0311 | B10 | Փիլիսոփայության հիմունքներ | | | | | * | * | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0415 | B11 | Ֆիզդաստիարակություն | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Կամրնորական դասընթացներ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0209 | B51 | Տնտեսագիտության հիմունքներ | | | | | | * | * | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0312 | B07 | Իրավունքի հիմունքներ | | | | | * | * | | * | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0311 | B11 | Քաղաքագիտության հիմունքներ | | | | | * | * | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0103 | B154 | Տրամաբանության հիմունքներ | | * | | * | | | | | * | | | | | | | | | | | * | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|--------------------------------|-----|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|--|--|--|---|--|---|--|---|---|---|---|---|---|--|--|--|--|--|---|---|---|---|--|--|
| 0416 | B01 | Ռազմագիտության հիմունքներ | | | | | | | * | * | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0103 | B79 | Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր | | * | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0208 | B08 | Գործարարության հիմունքներ | | * | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0311 | B08 | Բարոյագիտության հիմունքներ | | * | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0310 | B26 | Ազգագրության հիմունքներ | | | | | | | | * | * | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0310 | B03 | Մշակութաբանության հիմունքներ | | | | | | | | * | * | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| <i>Պարտադիր դասընթացներ</i> | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0103 | B46 | Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմունքներ | * | | | * | | | | | | | | | | | | | * | | * | | | | | | | * | | | | | | | | | | | |
| 0103 | B97 | Մասնագիտության ներածություն | | * | * | * | | | | | | * | * | | | | | | * | | | | | | | * | * | | | | | | | | | | | | |
| 0103 | B94 | Քոմպիյութերների կիրառում | * | | | * | | | | | * | | | | | | | | * | | * | | | | | * | * | | | | | | | | | | * | | |
| 0101 | B73 | Մաթեմատիկա 1 | * | * | | | | | | | | | * | | | | | | | | | | | | | * | | | | | | | | | | | | | |
| 0103 | B95 | Ինֆորմատիկա 1 | * | | | * | | | | | | | * | | | | | | * | | | | | | * | | | | | | | | | | * | | | | |
| 0103 | B96 | Ինֆորմատիկա 2 | * | | | * | | | | | | | * | | | | | | * | | | | | | * | | | | | | | | | * | | | | | |
| 0101 | B74 | Մաթեմատիկա 2 | * | * | | | | | | | | | * | | | | | | | | | | | | * | | | | | | | | | | | | | | |
| 0103 | B80 | Չափագիտություն | | * | | | | * | * | * | | | * | | | | | | | | | | * | | | | | | | | | | | | | | * | | |
| 0102 | B35 | Ֆիզիկա 1 | * | * | | | | | | | | | * | | | | | | | | | | | | * | | | | | | | | | | | | | | |
| 0103 | B85 | ԷՀՄ կազմակերպում | * | | | * | | | | | | | | * | | | | | * | | | | | | * | | | | | | | | | | | * | | | |
| 0103 | B67 | HTML, CSS | * | * | | * | | | * | * | | | * | * | * | | | | | | | | | * | | | | | | | | | | | * | | | | |
| 0102 | B36 | Ֆիզիկա 2 | * | * | | | | | | | | | * | | | | | | | | | | | | * | | | | | | | | | | | | | | |
| 0101 | B75 | Մաթեմատիկա 3 | * | * | | | | | | | | | * | | | | | | | | | | | | * | | | | | | | | | | | | | | |
| 0103 | B82 | Գծագրական երկրաչափություն | | * | | | | | | | | | * | | | | | | | | | | | | * | | | | | | | | | | | | | | |
| 0103 | B89 | Ծրագրավորման հիմունքներ 1 | | * | * | | * | | | | | | | | | | | | * | | | | | | * | | | | | | | | | | * | | | | |
| 0103 | B90 | Ծրագրավորման հիմունքներ 2 | | * | * | | * | | | | | | | | | | | | * | | | | | | * | | | | | | | | | | * | | | | |
| 0103 | B92 | JavaScript ծրագրավորման լեզու | | * | * | | * | | | | | | | | | | | | * | | | | | | * | | | | | | | | | | * | | | | |
| 0103 | B81 | Ստանդարտացում, սերտիֆիկացում | | | | | | * | * | * | * | | * | * | | | | | | | | | | * | | * | | | | | | | | | * | | | | |
| 0101 | B89 | Հավանականությունների տեսություն և մաթեմ.վիճակագրություն | * | * | | | | | | | | | * | | | | | | | | | | | | * | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|------|------|--|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 0103 | B91 | Software Design | | * | * | | * | | | | | | | | | | * | | | | * | | | | | | | | | |
| 0103 | B87 | Կառավարման հիմունքներ 1 | * | | | * | | | | | | | | | | | * | | | * | | | | | | | | | * | |
| 0103 | B88 | Կառավարման հիմունքներ 2 | * | | | * | | | | | | | | | | | * | | | * | | | | | | | | | * | |
| 0103 | B86 | Օբեկտների կոդմոդումաբ ծրագրավորում | | * | * | | * | | | | | | | | | | * | | | * | | | | | | | | * | | |
| 0103 | B93 | Web design | | * | | | * | | * | | | | | | | | * | | | | * | | | * | | | | | | |
| 0103 | B18 | Համակարգչային գրաֆիկա | * | | | * | | | | * | | | | | | | * | | | * | * | | | | | | | | * | |
| 0103 | B66 | Java ծրագրավորման լեզու | * | * | | * | | * | | | | | | | | | * | | | * | | * | | | | | | | | |
| 0103 | B68 | C # ծրագրավորման լեզու | * | * | * | * | | | | | | | | | | | * | | | | | * | | | | | | | * | |
| 0103 | B101 | Տվյալների բազաների կառավարման համակարգեր 1 | * | | | * | | | * | | | | | | | * | * | | | * | * | | | | * | | * | | * | |
| 0103 | B117 | Տվյալների բազաների կառավարման համակարգեր 2 | * | | | * | | | * | | | | | | | * | * | | | * | * | | | | * | | * | | * | |
| 0103 | B103 | Կառավարման տեղեկատվական համակարգեր | * | | | * | | | | | | | | | | * | | | * | | * | | | | | * | | * | | |
| 0103 | B102 | Համակարգերի ինֆորմացիոն տեսություն | | * | | * | * | | | * | * | | | | | * | | | | | * | | | | * | | | | | |
| 0103 | B114 | Ինֆորմացիայի և կոդավորման տեսություն | | * | | * | * | | | * | * | | | | | * | | | * | * | * | | | | | | | | | |
| 0103 | B36 | Ալգորիթմների տեսություն | * | * | | * | | | | | * | * | | | * | | | * | * | | | | * | * | | | | | * | |
| 0103 | B99 | Հաշվողական մեթոդների կիրառման տեսություն | * | * | | * | | * | | | * | | | | | * | | | | | * | | | | * | | | | | |
| 0209 | B13 | Մենեջմենտի և մարկետինգի հիմունքներ | | | | | | * | * | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0103 | B74 | Ծրագրավորում UNIX միջավայրում | * | * | | * | | | | | | | | | | * | | | | | | * | | | | * | | | * | |
| 0103 | B111 | Փորձարկումների պլանավորում և արդյունքների մշակում | | * | * | * | | | | | | | | | * | | | | * | | | | | | | * | | | * | |
| 0208 | B135 | Բանկեր և բանկային գործունեություն | | | | | * | * | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0103 | B100 | Համակարգային վերլուծություն և գործողություն. հետազոտում | * | * | | * | | | | * | | | | * | | | * | | * | * | | | | | | | | * | | * |
| 0103 | B110 | Ինֆորմացիոն անվտանգություն և ինֆորմացիայի պահպանում | * | | | * | | | | | | | * | | | | * | | * | | | * | | | | * | | | * | |

Կամրնտրական դասընթացներ

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|------------------------------|------|--|---|---|---|---|---|---|---|---|---|---|--|--|--|--|---|---|---|---|---|--|---|--|---|--|
| 0103 | B115 | Քոմպիյութերային ցանցեր և հեռահաղորդակցություն | * | | | * | | | | | | | | | | | * | | | | * | | | | * | |
| 0103 | B118 | Արհեստական բանականության հիմունքներ | * | | | * | | | | | | | | | | | * | | | * | | | * | | | |
| 0103 | B115 | Զուգահեռ ծրագրավորում | * | | | | | | | * | | * | | | | | | | | * | | | | | * | |
| 0103 | B20 | Օպերացիոն համակարգեր | * | | | | | | | * | | * | | | | | | | | * | | | | | * | |
| 0103 | B65 | Նորարարական տեխնոլոգիաներ | | | * | | | | | | | | | | | | * | | | * | | | | | | |
| 0103 | B72 | Ծրագրային համակարգերի թեստավորում և որակավորում | * | | | | | | * | | | | | | | | * | | | * | | | | | | |
| 0103 | B156 | Python ծրագրավորման լեզվի հիմունքները | * | * | | * | | * | | | * | | | | | | * | | * | | | | | | | |
| 0103 | B144 | Կլիենտ-սերվեր տեխնոլոգիաներ | * | | | * | | | | | | | | | | | * | | | * | | | | | * | |
| 0103 | B113 | Կորպորատիվ տեղեկատվական համակարգեր | * | | | * | | | | | | | | | | | * | | | * | | | | | * | |
| 0209 | B136 | Տնտեսական գործունեության վերլուծություն | * | | | * | | | | | | | | | | | | | * | * | | | | | | |
| 0103 | B84 | Կենսագործունեության անվտանգություն | | | | * | * | | * | * | | * | | | | | * | * | | | | | | | * | |
| 0209 | B95 | Էլեկտրոնային բիզնես և առևտուր | * | | | * | | | | | | | | | | | * | * | | | | | | | | |
| ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՄՈԴՈՒԼՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0103 | B106 | Կուրսային աշխատանք 1 /Կառավարման հիմունքներ/ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 0103 | B107 | Կուրսային աշխատանք 2/ Տվյալների բազաների կառավարման համակարգեր | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

Կրթական ծրագրի վերջնարդյունքները (Դասընթացի մասնագրի համապատասխան)

| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Տնտեսագիտության տեսության ծագումն ու զարգացումը: Ուսումնասիրման առարկան և մեթոդները: Արտադրության բնութագիրը: Շուկայական էկոնոմիկայի տեսության հիմունքներ: Արժեքի տեսություններ: Շուկայական հարաբերությունների էությունը, կառուցվածքն ու ֆունկցիաները Տնտեսական համակարգի ինքնակառավարումը: Շուկայական հավասարակշռվածություն: Ֆիրման շուկայական հարաբերությունների համակարգում: Ձեռնարկատիրական կապիտալի ձևավորումը: Ծախքերի էությունը: Արտադրություն և ծախքեր: Շահույթ և շահութաբերություն: Տնտեսական շահույթ, ձեռնարկատիրական եկամուտ, աշխատավարձ: Ագրոարդյունաբերական համալիր: Ռենտայի տեսություն: Մակրոտնտեսական քաղաքականության նպատակներն ու հասնելու ուղիները: Կուտակում, սպառում և ինսյոդություններ: Տնտեսական աճ: Տնտեսական զարգացման փուլայնությունը: Աշխատանք, զբաղվածություն և գործազրկություն Մարդկային կապիտալի տեսությունը: Դրամավարկային համակարգի էությունը: Արժեզրկում Ֆինանսական համակարգ և ֆինանսական քաղաքականություն: Պետության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: Համաշխարհային տնտեսությունը և զարգացման օրինաչափությունները: Միջազգային արժույթային և ֆինանսական համակարգեր:</p> |
| <p>14.Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Ջեյմս Դ, Գորթնի, Ռիչարդ Լ. Ստրոուպ «Տնտեսագիտություն. մասնավոր և հանրային ընտրություն», Երևան, «Տնտեսագետ», 1999 2. Մարգարյան Հ.Լ. , Մարգարյան Հ.Գ. Տնտեսագիտության տեսություն, ուս. Ձեռ. Ե 2017 3. Լ. Խաչատրյան, Լ. Մարգարյան , Տնտեսագիտության հիմունքներ ուս.մեթ. ձեռ.(ոչ տնտեսագիտական ֆակուլտետների համար), Ե 2014 |

4. Աղաջանյան Հ., Տնտեսագիտության տեսության ընդհանուր հիմունքները.-Եր.: 2008

| | | |
|---|-------------------------|-------------|
| 0312/B07 | 2. Իրավունքի հիմունքներ | 3. 2 կրեդիտ |
| 4. 2 ժամ/շաբ. | 5. գործ.-2 | |
| 6 IV կիսամյակ | 7. Ստուգարքային | |
| <p>8.Դասընթացի նպատակն է՝ Սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները: Նպատակներից է նաև ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների մշակումը, ինչպես նաև իրավական աշխարհայացքի ու մշակույթի ձևավորումը:</p> | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա) մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • Բնութագրել պետաիրավական հիմնական հասկացությունները, իրավունքի արդի ձևերը, իրավական կարգավորման կառուցակարգը, իրավունքի համակարգի հիմնական ճյուղերը, դրանց կարգավորման հիմնական աղբյուրները • Տարբերել օրինականություն, իրավաչափ և իրավախախտ վարքագիծ, իրավական պատասխանատվություն հասկացությունները • Բացատրել իրավունքի հիմնական ճյուղերի կարևոր հասկացությունները, կարգավորման առարկան, հիմնադրույթները <p>բ) գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • Համեմատել և տարբերակել պետաիրավական հիմնական հասկացությունները, իրավունքի աղբյուրները, դրանց աստիճանակարգությունը • Իրականացնել իրավական և սեփական իրավունքների պաշտպանության գործողություններ • Դրսևորել իրավական աշխարհայացք և իրավական մշակույթ <p>գ) ընդհանրական /փոխանցելի կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • Ինքնուրույն ուսումնասիրել իրավական կարգավորման աղբյուրները • Օգտվել իրավական տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից՝ ինտերնետ ռեսուրսներ, օրենսգրքեր, օրենքներ • Օժանդակակել օրինականության ապահովմանը, ցուցաբերել ակտիվություն, հարգել օրենքը և իրավական պետության արժեքները, ունենալ բարոյաիրավական պատշաճ գիտակցություն, պատասխանատվության զգացում | | |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը՝ Մ7 Այլ ոլորտների փորձագետների հետ շփվելու ունակություն, Մ8 Կատարված աշխատանքը պատշաճ ներկայացնելու և գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններ Մ10 Մասնակի իրավիճակում իրավական ակտերի կիրառման պահանջների որոշման կարողություն,</p> | | |
| <p>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝</p> <ul style="list-style-type: none"> • Գործնական պարապմունք, անհատակ և խմբակային աշխատանք | | |

| | | |
|--|-------------------------------|-------------|
| <ul style="list-style-type: none"> • Ինքնուրույն աշխատանք • Բանավոր ներկայացում/ պրեզենտացիա • Իրավիճակային խնդիրների քննարկում | | |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները Ստուգարքն անց է կացվում բանավոր: Տրվում է 4 հարց նախապես տրամադրված հարցաշարից:</p> | | |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Հասարակություն և պետություն: Իրավունք: Իրավական կարգավորման կառուցակարգը և իրավունքի կենսագործումը: Իրավունքի ձևերը: Իրավունքի համակարգը: Օրինականություն, իրավաչափ վարքագիծ, իրավախախտում: Կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմնահարցերը: Սահմանադրական իրավունք: Դատական իշխանություն և դատական համակարգ: Քաղաքացիական իրավունք: Աշխատանքային իրավունք: Ընտանեկան իրավունք: Էկոլոգիական իրավունք: Քրեական իր իրավունք: Դատավարական իրավունք: Միջազգային իրավունք:</p> | | |
| <p>14. Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. ՀՀ Սահմանադրություն 2015 2. ՀՀ քաղաքացիական, քրեական, աշխատանքային, քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքեր | | |
| 0311/B11 | 2. Քաղաքագիտության հիմունքներ | 3. 2 կրեդիտ |
| 4. 2 ժամ/շաբ. | 5. գործ.-2 | |
| 6 IV կիսամյակ | 7. Ստուգարքային | |
| <p>8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ուսանողների մոտ ձևավորել քաղաքական իրականության վերլուծության գործնական հմտություններ:</p> | | |
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա) մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • Ըմբռնել քաղաքագիտական հիմնական հասկացություններն ու սահմանումները, դրանց իմաստն ու նշանակությունը • Ընկալել քաղաքագիտական բովանդակության օտարալեզու մասնագիտական տեքստերը և կատարել թարգմանություններ <p>բ) գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • Կատարել բավարար քաղաքագիտական վերլուծություններ • Կողմնորոշվել գործնական քաղաքականության առանձնահատկությունների մեկնաբանման հարցերում • Մատնանշել դեմոկրատիայի, քաղաքական մշակույթի, քաղաքական սոցիոլոգիայի հիմնահարցերը <p>գ) ընդհանրական /փոխանցելի կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • Օգտվել մասնագիտական գրականությունից • Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը | | |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը՝ Մ7 Այլ ոլորտների փորձագետների հետ շփվելու ունակություն, Մ8 Կատարված աշխատանքը պատշաճ ներկայացնելու և գիտելիքները գործ-</p> | | |

| | | |
|--|--|--|
| նականում կիրառելու կարողություններ | | |
| 11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝ <ul style="list-style-type: none"> • Դասախոսություն • Ինքնուրույն աշխատանք • Բանավոր ներկայացումներ | | |
| 12.Գնահատման մեթոդները և չափանիշները Ստուգաքնն անց է կացվում բանավոր: Տրվում է 4 հարց նախապես տրամադրված հարցաշարից: | | |
| 13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Քաղաքագիտության ինստիտուցիոնալ կայացման գործընթացը: Քաղաքականությունը որպես սոցիալական երևույթ. բնորոշ գծերն ու առանձնահատկությունները: Քաղաքական իշխանության էությունն ու կառուցվածքը: Հասարակության քաղաքական համակարգը: Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Ընտրություններ և ընտրական համակարգեր: Քաղաքական գաղափարախոսություններ: Կոռուպցիան և նրա դրսևորման տեսակները, նրա դեմ պայքարի ձևերն ու մեթոդները: | | |
| 14.Հիմնական գրականության ցանկը 1. Соловьев А.И.Полоитология:политическая теория, политические технологии. М2006 2. Гаджиев К.С. Политическая философия М 1999 3. Мухаев Р. Т. Теория политики М 2005 4. Дегтерев А.А. Основы политической теории М 1998 | | |

| | | |
|--|------------------------------|-------------|
| 0103/B154 | 2. Տրամաբանության հիմունքներ | 3. 2 կրեդիտ |
| 4. 2 ժամ/շաբ. | 5. դաս.-2 | |
| 6 III կիսամյակ | 7. Ստուգաքննաշին | |
| 8.Դասընթացի նպատակն է՝ <ul style="list-style-type: none"> • Դասընթացի հիմնական հասկացությունների, օրենքների, սկզբունքների իմացություն • Ուսանողը ոչ միայն բացահայտում և կատարելագործում է իր տրամաբանական կարողությունները, այլ ձեռք է բերում գիտելիքներ, որոնք նպաստում են մասնագիտական առարկաների տեսությունների հիմնական հասկացությունների և կառուցվածքի յուրացմանը, հետազոտական հմտությունների ձևավորմանը | | |
| 9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա) մասնագիտական գիտելիք և իմացություն <ul style="list-style-type: none"> • Հասկանալ մտքի կառուցվածքը • Իմանալ տրամաբանական կանոնների և օրենքների մասին, որոնք կշռադատության ընթացքում ապահովում են մեր մտքի կանոնավորությունը ու հետևողականությունը, ճշմարիտ եզրակացությունների ստացումը և գիտական գիտելիքների հիմնավորվածությունը • Հասկանալ տրամաբանական գիտելիքի էությունը և գործառնական տեսանկյունները բ) գործնական մասնագիտական կարողություններ <ul style="list-style-type: none"> • Հասկանալ տրամաբանական ճանաչողական և մեթոդաբանական | | |

| |
|---|
| <p>գործառույթների անհրաժեշտությունը, գիտատեսական և գործնական ուսումնասիրությունների ժամանակ</p> <ul style="list-style-type: none"> • Ճիշտ կատարել և գնահատել հասկացությունների հետ կապված տրամաբանական գործողությունները • Իրականացնել դատողությունների և անհրաժեշտ մտահանգումների տրամաբանական վերլուծություն և գնահատում <p>գ) ընդհանրական /փոխանցելի կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • կարողանալ դրսևորել տրամաբանական մտածողության անհրաժեշտ մշակույթ՝ պահպանելով կանոնավոր մտածողության որոշակիության, անհակասականության, հիմնավորվածության և հետևողականության հիմնարար սկզբունքների ու դրանցից բխող մասնավոր նորմերի պահանջները |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը՝ Մ2 մասնագիտական ոլորտի հենքային և ընդհանուր գիտելիքների հիմունքների իմացություն, Մ5 Վերլուծելու և խնդիրներ լուծելու կարողություն Մ11 դրսևորել մասնագիտության պատմության և հիմունքների իմացություն, Ը1 ցուցաբերեն ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում տվյալ առարկայական ոլորտում գործունեություն ծավալելիս</p> |
| <p>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝</p> <ul style="list-style-type: none"> • Դասախոսություն • Քննարկումներ • Անհատական և ինքնուրույն աշխատանքներ |
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշները Եզրափակիչ ստուգաբքը բանավոր է: Ստուգաբքն անցկացվում է ուսանողներին նախապես տրված հարցաշարով. յուրաքանչյուր ուսանողին տրվում է 4-5 հարց:</p> |
| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Տրամաբանության առարկան և նշանակությունը: Բազմատրամաբանության սկզբունքը: Միտք և լեզու: Հասկացություն: Հասկացության ծավալն ու բովանդակությունը: Հասկացության տեսակները: Տրամաբանական գործողություններ հասկացությունների հետ: Հասկացության ծավալի բաժանման էությունը, տեսակները, կանոնները: Դասակարգման էությունը, տեսակները, կանոնները: Դատողության էությունը և կազմը: Պարզ և բարդ դատողություններ, դրանց տեսակները: Տրամաբանական մտածողության հիմնական օրենքները: Անհրաժեշտ մտահանգումներ, դրանց տեսակները և կանոնները:</p> |
| <p>14.Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1 Գևորգյան Հ.Ա., Բաղդասարյան Վ.Խ. Տրամաբանություն, Ե. 2015 2 Кириллов В.И., Орлов Г.А, Упражнение по логике, М 2005 3 Ивлев Ю.В., Логика, 3-ое издание, М 2005 4 Ивин А.А, Практическая логика, М2002 5 Гетманова А, Логика, 9-ое издание, М 2006 |

| | | |
|---------------|------------------------------|-------------|
| 0416/B01 | 2. Ռազմագիտության հիմունքներ | 3. 2 կրեդիտ |
| 4. 2 ժամ/շաբ. | 5. գործ.-2 | |

| | |
|--|-----------------|
| 6 IV կիսամյակ | 7. Ստուգարքային |
| <p>8. Դասընթացի նպատակն է ուսանողների տրամադրել տեսական և գործնական գիտելիքներ պատերազմների բնույթի, օրենքների, վարման եղանակների մասին:</p> | |
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա) մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • Իմանալ շարային պատրաստականության հիմունքները • Իմանալ կրակային պատրաստականության հիմունքները • Իմանալ զինվորական պատասխանատվության տեսակները <p>բ) գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • վերլուծել այլ աղբյուրներից ստացված ինֆորմացիան • մշակել համապատասխան փաստաթղթեր • կիրառել ուսուցանման և հսկողություն տարբեր մեթոդներ և ձևեր <p>գ) ընդհանրական /փոխանցելի կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • Տրիրապետել բանակի հիմնական գիտելիքներին • Տրիրապետել անհատական և խմբակային պաշտպանության մեթոդներին | |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը՝ Մ7 Այլ ոլորտների փորձագետների հետ շփվելու ունակություն, Մ8 Կատարված աշխատանքը պատշաճ ներկայացնելու և գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններ</p> | |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝</p> <ul style="list-style-type: none"> • դասախոսություն • գործնական աշխատանք, • սլայդի ցուցադրում, • ինքնուրույն աշխատանք և հանձնարարություններ: | |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները Ստուգարքն անց է կացվում բանավոր: Տրվում է 4 հարց նախապես տրամադրված հարցաշարից</p> | |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Հայ ռազմարվեստի պատմությունը: Բանակի կառուցվածքը: մարտավարության հիմունքներ: Ինժեներական արգելափակոցներ: Հակատանկային ականներ: Կրակային պատրաստություն: Կրակոցի երևույթը և գնդակի թռիչքը: Գնդակի թռիչքի մեխանիզմները: Ավտոմատով կրակ վարելը: Անվտանգության կանոնները կրակելու ժամանակ: Զինվորական պատասխանատվության տեսակները: Զինվորական հանցագործություն: Շարային պատրաստականություն: Միջազգային մարդասիրական իրավունք: Անվտանգ կենսագործունեություն: Պաշտպանական կառույցներ: Առաջին բուժօգնության հիմունքներ:</p> | |
| <p>14. Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Современная военная психология: Хрестоматия под ред. А.А. Урбанович. - Мн., 2003. 2. Попов Ю.В. Дисциплина - фактор победы, основа боеготовности войск/ НВВПОУ. - Новосибирск, 1979. 3. Военный энциклопедический словарь. М.: Воениздат, 1986. 4. Всемирная история: В 24 т. Минск: Литература, 1996. 5. Приемы и способы действий солдата в бою: Учеб. пособие. М.: Воениздат, 1988. 6. Безопасность жизнедеятельности: Сборник нормативных документов по подготовке | |

учащейся молодежи в области защиты от чрезвычайных ситуаций. М.: АСТ, 1998.

| | | |
|---|--|-------------|
| 0103/B79 | 2. Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր | 3. 2 կրեդիտ |
| 4. 2 ժամ/շաբ. | 5. դաս.-2 | |
| 6. III կիսամյակ | 7. Ստուգարքային | |
| <p>8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողների մոտ ձևավորել պատկերացումներ ժամանակակից բնագիտության ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, զարգացման ուղղությունների, վերջին ժամանակներում ձեռք բերված նվաճումների, տնտեսության մեջ վերջիններիս կիրառության վերաբերյալ</p> | | |
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա) մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • Կիմանա ժամանակակից բնագիտության բնագավառում կատարված հայտնագործությունների մասին • Կհասկանա բնագիտության նշանակությունը ժամանակակից տնտեսության և հասարակության զարգացման մեջ <p>բ) գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • Կկարողանա կիրառել ժամանակակից բնագիտության գիտելիքները առօրյա կյանքում <p>գ) ընդհանրական /փոխանցելի կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • Կկարողանա բնագիտական գիտելիքները տարածել հումանիտար գիտությունների ոլորտ | | |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը՝ Մ2 մասնագիտական ոլորտի հենքային և ընդհանուր գիտելիքների հիմունքների իմացություն, Մ9 Ճկուն մտածողության՝ ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու և լուծումներ առաջադրելու կարողություն</p> | | |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝</p> <ul style="list-style-type: none"> • Դասախոսություն • Մեմինար • քննարկումներ | | |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները Եզրափակիչ ստուգարքը բանավոր է: Ստուգարքն անցկացվում է ուսանողներին նախապես տրված հարցաշարով. յուրաքանչյուր ուսանողին տրվում է 4-5 հարց:</p> | | |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բնագիտությունը և հասարակության զարգացման փուլերը: Միկրոաշխարհի օրինաչափությունները: Ատոմների և մոլեկուլների կառուցվածքի առանձնահատկությունները և դրանց դրսևորումները ժամանակակից սարքերում: մակրոաշխարհի օրինաչափությունները: Էներգիայի ստացման միջոցները ներկայումս և հետագայում: Էներգիայի վերականգնելի աղբյուրներ: Պոլիմերների, պլաստմասսաների, մանրաթելերի և կաուչուկների ստացման հնարավորությունները: Մեգաաշխարհի օրինաչափությունները: Արեգակնային համակարգի և տիեզերքի</p> | | |

կառուցվածքը: Սև խոռոչներ:

14. Հիմնական գրականության ցանկը

1. Ժամանակակից բնագիտության կոնցեպցիաները առցանց դասընթացներ Ե 2012

| | | |
|---|------------------------------|-------------|
| 0208/B08 | 2. Գործարարության հիմունքներ | 3. 2 կրեդիտ |
| 4. 2 ժամ/շաբ. | 5. դաս.-2 | |
| 6 III կիսամյակ | 7. Ստուգարքային | |
| <p>8. Դասընթացի նպատակն է ուսանողներին տրամադրել գործարարության էության, դրսևորման առաանձնահատկությունների, գործարարության զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ գիտելիքներ և իմացություն: Ուսուցանել գործարարության տեսա-մեթոդական հենքերը, ինչպես նաև գործարարության կազմակերպման տեսա-գործնական հիմունքներն, անհրաժեշտ հմտություններ:</p> | | |
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա) մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none">• Սահմանել գործարարության էությունը և հիմնական հասկացությունները, գործարարության դրսևորման առաանձնահատկությունները և մոդելային բնորոշիչները, գործարարության փուլային զարգացման բնորոշիչները և առաանձնահատկությունները:• Ներկայացնել գործարարության տեսա-մեթոդական հենքերը, ինչպես նաև գործարարության կազմակերպման տեսա-գործնական հիմունքները• Լուսաբանել գործարարության կազմակերպման ձևերը, կառավարման սկզբունքները և մոտեցումները <p>բ) գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none">• Վերլուծել և տարբերակել գործարարության համակարգերնու տիպերը, գտնել բիզնեսի զարգացմանն համարժեք մոտեցումները, ընտրել գործարարության կազմակերպման և կառավարման տեսա-գործնական հիմքերը և դրանց կիրարկման ձևերը• Գնահատել ՀՀ-ում գործարար միջավայրը, ներկայացնել գործարարության զարգացման հնարավորությունները, խնդիրները, ռսկերը, կանխատեսել գործարարության զարգացման հնարավորությունները և հեռանկարները• Օգտվել բիզնես-պլանի մշակման գործընթացից, կառարել բիզնես հաշվարկներ, գնահատել հնարավոր ֆինանսավորման աղբյուրներ <p>գ) ընդհանրական /փոխանցելի կարողություններ</p> <ul style="list-style-type: none">• Օգտվել տեղեկատվական-վերլուծական տարատեսակ աղբյուրներից• Իրականացնել գործարարության խաղարկային ներկայացումներ | | |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը՝ Մ2 մասնագիտական ոլորտի հենքային և ընդհանուր գիտելիքների հիմունքների իմացություն,</p> | | |

| |
|---|
| <p>Մ9 Ճկուն մտածողության՝ ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու և լուծումներ առաջադրելու կարողություն</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝</p> <ul style="list-style-type: none"> • Դասախոսություն • Սեմինար • քննարկումներ |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները Եզրափակիչ ստուգաբքը բանավոր է: Ստուգաբքն անցկացվում է ուսանողներին նախապես տրված հարցաշարով. յուրաքանչյուր ուսանողին տրվում է 4-5 հարց:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Ձեռնարկության էությունը, դրսևորման ձևերը, գործառույթները, խնդիրները: Ձեռնարկատիրական գործունեության չափորոշիչները և մոդելային առանձնահատկությունները: Ձեռներեցական որոշումների կայացման գործընթացը, ձեռներեցական հաաշվարկներ: Ֆինանսավորման աղբյուրները և ձևերը: Ձեռներեցի գործունեության համընդհանուր բնույթը և տրամաբանությունը: Ձեռներեցության տեսակները, չափորոշիչները: Ձեռներեցության ձևերը և դրանց չափորոշիչները: Բիզնեսի ռազմավարական զարգացումը և բիզնես ռազմավարությունը: Կառավարումը, էությունը և իրագործման փուլային առանձնահատկությունները: Ռազմավարական պլանավորումը և կառավարումը, մոտեցումները: Ձեռներեցության կազմակերպման մոտեցումները, խնդիրները: Բիզնես-պլանի էությունը և կառուցվածքը: Շուկայի ուսումնասիրությունը և վերլուծությունը:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Бекетова О.Н, Бизнес- план. Уч.пособие для ВУЗ-ов, Теория и практика М, 288 с 2. Буров В.Ю. Основы предпринимательства , Уч.пособие для ВУЗ-ов, Чита 2011441с 3. Организация предпринимательской деятельности, М-2009, 336С 4. Питер Ф. Бизнес и инновации М2009-432 с |

| | | |
|---|-------------------------------|-------------|
| 0311/B08 | 2. Բարոյագիտության հիմունքներ | 3. 2 կրեդիտ |
| 4. 2 ժամ/շաբ. | 5. դաս.-2 | |
| 6 III կիսամյակ | 7. Ստուգաբքային | |
| <p>8. Դասընթացի նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> • Վերլուծել ժանակակից քաղաքակրթության մարտահրավերների բարոյական հիմնախնդիրները • Կանխատեսել բարոյական շարժառիթներ ունեցող ճգնաժամային երևույթները և հետևանքները • Ծանոթանալ սիրո, ընտանիքի, կյանքի իմաստի, իրավունքի բարոյական հիմնահարցերին | | |
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա) մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • Տիրապետել բարոյական հարաբերությունների հիմունքներին և տիրապետությանը • Ծանոթանալ սիրո մետաֆիզիկայի, ընտանիքի, պլանավորման և սիրո հոգեվերլուծության հիմնախնդիրներին, տիրապետել բարոյական | | |

| |
|---|
| <p>կոնֆլիկտների լուծման և հաղթահարման տեխնոլոգիաներին</p> <p>բ) գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • Հասկանալ բարոյական ընտանիքի և կյանքի իմաստի ձևավորման մեխանիզմները • Ընտրել բարոյական կոնֆլիկտների հաղթահարման արդյունավետ մոդելներ • Գնահատել բարոյականության դերը կյանքի կազմակերպման ու կանոնակարգման գործում <p>գ) ընդհանրական /փոխանցելի կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը • Վերլուծել արդի քաղաքակրթական մարտահրավերների բարոյական տեսանկյունները |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը՝ Մ2 մասնագիտական ոլորտի հենքային և ընդհանուր գիտելիքների հիմունքների իմացություն,</p> |
| <p>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝</p> <ul style="list-style-type: none"> • Դասախոսություն • Քննարկումներ • Անհատական և ինքնուրույն աշխատանքներ |
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <p>Եզրափակիչ ստուգարքը բանավոր է: Ստուգարքն անցկացվում է ուսանողներին նախապես տրված հարցաշարով. յուրաքանչյուր ուսանողին տրվում է 4-5 հարց:</p> |
| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Բարոյականության էությունը և կառուցվածքը: Բարոյական հարաբերությունների էությունը: Կրոնական էթիկա: Բիոէթիկա: Քաղաքական էթիկա: Սիրո մետաֆիզիկա: Կյանքի իմաստը:</p> |
| <p>14.Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Апресян Ю. Этика, М.2004 2. Бодрийяр Ж. Забыть Фуко. СПб 2011 3. Матвеев П. Религиозная этика, М 2014 4. Фромм Э. Искусство любить, М2008 5. Швейцер А. Культура и этика М. 2010 |

| | | |
|--|----------------------------|-------------|
| 0310/B26 | 2. Ազգագրության հիմունքներ | 3. 2 կրեդիտ |
| 4. 2 ժամ/շաբ. | 5. գործ.-2 | |
| 6 IV կիսամյակ | 7. Ստուգարքային | |
| <p>8.Դասընթացի նպատակն է՝</p> <p>ուսանողներին լուսաբանել հայ ժողովրդի կենցաղի և մշակույթի մի շարք հարցեր՝ տնտեսական զբաղմունքները, ընտանեկան և ազգակցական հարաբերությունները, նյութական և հոգևոր մշակույթը, տոները, ծեսերը, սովորույթները և այլն:</p> | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա) մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • Վերարտադրել <<ազգագրության>> հասկացության ամենատարածված սահմանումները, • Ծանոթանալ հայ ժողովրդի կենցաղին և մշակույթին | | |

| |
|--|
| <ul style="list-style-type: none"> • Ճանաչել ժամանակակից մշակութային գործընթացները <p>բ) գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • Նկարագրել ազգագրության շրջանակներում ուսումնասիրվող հիմնական ոլորտները • Տարանջատել մերօրյա մշակութային երևույթները և գործընթացները <p>գ) ընդհանրական /փոխանցելի կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • Վերլուծել փաստեր և կատարել հետևություններ • Ստեղծագործաբար կիրառել ազգագրության մասին ստացած գիտելիքները մշակույթի տարբեր ոլորտներում |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը՝ Մ7 Այլ ոլորտների փորձագետների հետ շփվելու ունակություն, Մ8 Կատարված աշխատանքը պատշաճ ներկայացնելու և գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններ</p> |
| <p>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝</p> <ul style="list-style-type: none"> • դասախոսություն • գործնական աշխատանք, • սլայդի ցուցադրում, • ինքնուրույն աշխատանք և հանձնարարություններ: |
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշները Ստուգաքնն անց է կացվում բանավոր: Տրվում է 4 հարց նախապես տրամադրված հարցաշարից</p> |
| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Տնտեսական կենցաղ: Բրիչայի երկրագործություն: Արորոային երկրագործություն: Ցանքերի խնամքը: Անասնապահություն և որսորդություն: Տնային արդյունաբերություն և արվեստ: Հաղորդակցական և կապի միջոցներ: Նյութական մշակույթ: Բնակավայրերը հին շրջանում: Բնակավայրերը և շենքերը IX.: Շենքեր: Արտադրական շենքեր: Կահկարասի: Ամաններ, սպասք: Զգեստ և զարդարանք: Զենքեր: Սնունդ: Հասարակական կենցաղ: Ընտանեկան կենցաղը մինչև IXդ: Ընտանեկան կենցաղը IX–XX դդ: Ամուսնություն: Ծիսական կարգեր: Բանահյուսություն, ժողովրդական երգ ու պարեր, խաղեր:</p> |
| <p>14.Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Բազեյան Կ. Ռ., Աղանյան Գ. Թ., Ալեքսանդրապոլ. Ազգագրական էսքիզներ//Շիրակի հնագիտական և պատմաազգագրական ուսումնասիրություններ, հ. II, ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան-Գյումրի, 2014, էջ 5-118: 1 2. Բազեյան Կ. Ռ., Արփի Ավդալյան ի ծաղկածասեղնակարերը//Ավդալյան Ա, Հոգին իբրև զարդանախշ, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2016, էջ 2-3: 3. Բալայան Մ., Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի գործվածքի հավաքածուն. Գորգեր, կարպետներ, անկողնապարկեր, խուրջիներ, Երևան, Զանգակ, 2012, – 128 էջ: 4. Բալայան Մ., Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարան : http://qoo.by/2BFj 5. Բարսեղյան Լ. Ա., Գեղամալեռների «վիշապները», ՊԲՀ, 1967, №4, էջ 181-188: 6. Բարսեղյան Լ. Ա., Հայոց ցեղասպանությանը նվիրված թանգարանային ցուցադրություն կազմակերպման միջանկյալ արցունք// Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցերը, Երևան, 2002, №6, էջ 3-18: 202 7. Գյումրի. Քաղաքը և արդիկ, խմբ. Վ. Ղուկասյան, Գյումրի, Գյումրու քաղաքապետ |

տարան, 2012, – 454 էջ

8. Գորգեր և ձեռագործ, Ն. Ադոնցիան վան Սիսիանի պատմության թանգարան, կազմող՝ Օ. Պետրոսյան, Սիսիան, ՀՀ մշակույթի նախարարություն, 2010, – 20 էջ

9. Հայկական տարազը XVIII–XIX դդ., պրոմ-կատալոգ, Երևան, ՀՊԹ, 2014, – 161 էջ:

10. Նահապետյան Ռ., Հայագագաբանական մտքի սկզբնավորումը // ՊԲՀ, 2011, N3, էջ 132-
Арутюнян Ю. В., Дробижева Л. М., Сусоколов А. А., Этносоциология. Учебное пособие для вузов, М.: Аспект Пресс, 1999, – 271 с.

| | | |
|--|---------------------------------|-------------|
| 0310/B03 | 2. Մշակութաբանության հիմունքներ | 3. 2 կրեդիտ |
| 4. 2 ժամ/շաբ. | 5. գործ.-2 | |
| 6 IV կիսամյակ | 7. Ստուգարքային | |
| <p>8. Դասընթացի նպատակն է՝ Ծանոթացնել ուսանողներին մշակույթ ֆենոմենի բնութագրերի և մշակույթը հետազոտող գիտակարգերին: Ձևավորել ընդհանուր և մասնագիտության հետ առնչվող մշակույթի ոլորտների և գործընթացների մասին կայուն գիտելիքներ: Ուսանողների մոտ ձևավորել նոր գիտելիքներ հայ և համաշխարհային մշակույթների և ներկա մշակութային գործընթացների մասին:</p> | | |
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա) մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • Վերարտադրել <<մշակույթ>> հասկացության ամենատարածված սահմանումները, մշակույթի առաջացման և զարգացման տեսությունները • Ներկայացնել մշակույթի կառուցվածք, բաղադրիչները • Նկարագրել մշակութաբանության շրջանակներում ուսումնասիրվող հիմնական ոլորտները • Քննարկել համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացման օրինաչափությունները • Ճանաչել ժամանակակից մշակութային գործընթացները <p>բ) գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • Բացահայտել մշակութային երևույթների բաղադրիչները և դրսևորումները, պատճառները և պայմանները • Ճանաչել և իրարից տարբերել համաշխարհային մշակութային գործընթացի պատմական լոկալ դրսևորումներ • Տարանջատել մերօրյա մշակութային երևույթները և գործընթացները <p>գ) ընդհանրական /փոխանցելի կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • Վերլուծել փաստեր և կատարել հետևություններ • Ստեղծագործաբար կիրառել մշակույթի մասին ստացած գիտելիքները մշակույթի տարբեր ոլորտներում | | |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը՝ Մ7 Այլ ոլորտների փորձագետների հետ շփվելու ունակություն, Մ8 Կատարված աշխատանքը պատշաճ ներկայացնելու և գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններ</p> | | |

| |
|---|
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝</p> <ul style="list-style-type: none"> • դասախոսություն <ul style="list-style-type: none"> • գործնական աշխատանք, • սլայդի ցուցադրում, • ինքնուրույն աշխատանք և հանձնարարություններ: |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <p>Ստուգաքնն անց է կացվում բանավոր: Տրվում է 4 հարց նախապես տրամադրված հարցաշարից</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Մշակութաբանության ուսումնասիրման օբյեկտը, առարկան:</p> <p><<Մշակույթ>> հասկացության ամենատարածված սահմանումները, մշակույթի առաջացման և զարգացման տեսությունները: Մշակույթն ուսումնասիրող գիտակարգերը: Մշակույթի կառուցվածք, բաղադրիչները, գործառույթները և մեխանիզմները: Մշակութային գործընթացներ: Մշակութային նորմեր: Մշակութային ավանդույթը և նորույթը, ադապտացման, ինտեգրման և ձուլման հասկացությունները: Մշակույթը և գենդերը: Մշակույթը և սոցիալական կառուցվածքը: Մշակույթի քաղաքական և տնտեսական չափումները: Համաշխարհային մշակույթի պատմական զարգացումները, մոտեցումները, հարցադրումները և օրինաչափությունները: Հայ մշակույթի պատմական զարգացումները, մոտեցումները, հարցադրումները և օրինաչափությունները:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 7. Գուրևիչ Պ., Մշակութաբանություն, Ե.2002 8. Арутюнов С.А., Рыжков С.И. Культурная антропология, М 2004 9. Розин В.М., Культурология, М 1998 10. Кравченко А.И., /, Культурология, М 2003 |

Մասնագիտական

| | | |
|--|--|-------------|
| 1. 0103/B46 | 2. Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմունքներ | 3. 4 կրեդիտ |
| 4. 4 ժամ/շաբ. | 5. դաս 2 լաբ.- 2. | |
| 6. I կիսամյակ | 7. Եզրափակիչ գնահատում | |
| <p>8. Դասընթացի նպատակն է</p> <p>Ծանոթացնել տեղեկատվական տեխնոլոգիայի հիմնական հասկացություններին և տեղեկատվական տեխնոլոգիայի ստեղծմանը, հավաքագրմանը ու ամրագրմանը: Պետք է լուրջ ուշադրություն դարձնել.</p> <ul style="list-style-type: none"> - Տեղեկատվական տեխնոլոգիայի մշակմանը: - Տեղեկատվական տեխնոլոգիայի պահպանմանը և արխիվացմանը: - տեղեկատվական տեխնոլոգիաների էվոլյուցիայի փուլերին և նրանց դերին տնտեսության և հասարակության զարգացման գործում: | | |
| <p>9. Դասավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա) մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • թիմային աշխատանք | | |

| |
|---|
| <ul style="list-style-type: none"> • թիմում աշխատելու ունակություն: • գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն • սովորելու ունակություն • ինքնուրույն աշխատելու ունակություն: • կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները: <p>բ) գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • վերլուծելու և սինթեզելու ունակություն • հենքային ընդհանուր գիտելիքներ • մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ <p>գ) ընդհանրական /փոխանցելի կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն • որոշումների ընդունում : |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը՝</p> <p>Մ1. Վերլուծելու, սինթեզելու, կազմակերպելու և պլանավորելու ունակություններ,</p> <p>Մ4. տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն),</p> <p>Մ14. Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը, նշանակությունն ու գործառույթները հասկանալ և ցուցաբերել ստացված հենքային գիտելիքները վերլուծելու կարևորությունը ընկալելու ունակություն</p> <p>Մ17. դրսևորել ժամանակակից խոր գիտելիքներ մասնագիտական ոլորտում (նորագույն տեսությունների, դրանց մեկնաբանությունների, մեթոդների և եղանակների իմացություն),</p> <p>Ը1. ցուցաբերեն ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում տվյալ առարկայական ոլորտում գործունեություն ծավալելիս:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Դասախոսություն, գործնական/լաբորատոր պարապմունք 2. ինքնուրույն աշխատանք |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <p>Ընթացիկ ստուգումները կազմակերպվում են համակարգչով, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով: Ստուգման թեստը պարունակում է 25 հարց, 1 հարցը 0.2 միավոր: Եզրափակիչ քանավոր ստուգում՝ 6 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>Ակտիվության աստիճան, ինքնուրույն աշխատանք՝ 2 միավոր առավելագույն արժեքով:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Տեղեկատվություն և ինֆորմատիկա: Տեղեկատվական տեխնոլոգիայի դասակարգումը: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը տարբեր առարկայական բնագավառներում: Էլեկտրոնային փաստաթղթեր, գրքեր և գրադարաններ: Էլեկտրոնային օֆիս: Անվտանգության և պաշտպանության տեղեկատվական տեխնոլոգիաները: Տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրատեխնիկական միջոցները:</p> |

14. Հիմնական գրականության ցանկը

1. Առստամյան Վ.Վ., Ավետիսյան Ռ.Վ., - Տեղեկատվական տեխնոլոգիաներ. - Ստեփ. 2009թ.
2. Համբարձումյան Շ.Դ. - Ինֆորմացիոն համակարգեր և տեխնոլոգիաներ. - Եր. 2004թ.
3. Автоматизированные системы обработки учетно-аналитической информации. Учебник для вузов Под ред. В.С. Рожкова, М., Финансы и статистика, 1992
4. Петров В.Н. Информационные системы. Учебник для вузов М. 2003

Համացանցային աղբյուրներ

1. <http://www.ict.edu.ru/lib/index.php?a=elib&c=getForm&r>
2. <http://www.intuit.ru/department/hardware/atmcs>
3. <http://www.intuit.ru/department/hardware/comparch>

| | | |
|---|--------------------------------|-------------|
| 0103/B97 | 2. Մասնագիտության ներածություն | 3. 2 կրեդիտ |
| 4. 2 ժամ/շաբ. | 5. դաս.-2, | |
| 6 I կիսամյակ | 7. առանց եզրափակիչ գնահատում | |
| <p>8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտության և այդ մասնագիտության մասնագիտացումների հետ: Ծանոթացում համալսարանում ընդունված գնահատման համակարգի հետ, համալսարանում գործող վարքի կանոնների հետ, ինչպես օգտվել հանրապետական գրադարանից, համալսարանի գրադարանից, հանրապետական գիտատեխնիկական գրադարանից, ծանոթացում իրենց մասնագիտության մասնագիտացումների ուսումնական պլանների հետ, առարկաների միջև եղած կապերի հետ: Նախնական ծանոթացումներ մի շարք սահմանումների հետ, ինչպիսին են՝ համակարգ, բարդ համակարգ, ավտոմատ կառավարման համակարգ, ավտոմատացված կառավարման համակարգ, համակարգերի մոդելավորման հասկացություններ, մոդելներ և նրանց անհրաժեշտությունը ցանկացած գործընթացներում:</p> | | |
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա) մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • Հանրապետական և համալսարանի գրադարաններից օգտվելու հմտություն • SS-երի կիրառությունների ունակություն և հմտություն • SS-ը արդյունաբերությունում և կրթության համակարգում կիրառելու ունակություն <p>բ) գործնական մասնագիտական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • դրսևորել մասնագիտության պատմության և հիմունքների իմացություն • համապատասխան համատեքստում ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվությունը • առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն • կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները • ցուցաբերել ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների որակի իմացություն <p>գ) ընդհանրական /փոխանցելի կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • վերլուծելու և սինթեզելու ունակություն | | |

| |
|---|
| <ul style="list-style-type: none"> • հենքային ընդհանուր գիտելիքներ • մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ • տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն) • որոշումների ընդունում |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը՝</p> <p>Մ2 մասնագիտական ոլորտի հենքային և ընդհանուր գիտելիքների հիմունքների իմացություն,</p> <p>Մ3 մայրենի լեզվով բանավոր և գրավոր հաղորդակցություն, երկրորդ օտար լեզվի իմացություն,</p> <p>Մ4 տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն),</p> <p>Մ11 դրսևորել մասնագիտության պատմության և հիմունքների իմացություն,</p> <p>Ա2 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,</p> <p>Մ14 Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը, նշանակությունն ու գործառույթները հասկանալ և ցուցաբերել ստացված հենքային գիտելիքները վերլուծելու կարևորությունը ընկալելու ունակություն</p> <p>Ը1 ցուցաբերեն ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում տվյալ առարկայական ոլորտում գործունեություն ծավալելիս</p> <p>Ը2 Տիրապետել տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:</p> |
| <p>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝</p> <ul style="list-style-type: none"> • Դասախոսություն • Անհատական և ինքնուրույն աշխատանքներ |
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <p>Նախատեսված են 2 միջանկյալ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, նախօրոք տրամադրված հարցաշարից: Ակտիվության աստիճան, ինքնուրույն աշխատանք՝ 2 միավոր առավելագույն արժեքով:</p> |
| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Համալսարանում գործող վարքի կանոնները: Համալսարանում ընդունված գնահատման կարգը: Կուրսային և ավարտական աշխատանքների ձևավորումը, պաշտպանությունը: Կրեդիտային համակարգի նկարագիրը, գործառույթները: Մասնագիտական մասնագիտացումների առարկայական տիրույթը: Գաղափար ինֆորմացիայի մասին: Տեղեկատվություն և ինֆորմատիկա: Հաղորդագրություն և կոդ: Ինֆորմացիայի կոդավորում: Տեղեկատվական տեխնոլոգիաներ, նրանց դասակարգումը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը տարբեր բնագավառներում: Տեղեկատվական մոդել և տեղեկատվական գործընթացների մոդելավորում: Գաղափար համակարգի մասին: Համակարգերի դասակարգումը: Կառավարումը համակարգերում: Ավտոմատ կառավարման համակարգեր և ավտոմատացված կառավարման համակարգեր: Տեղեկատվական համակարգերի կազմն բնութագրին ու կառուցվածքը: Տեղեկատվական համակարգերի նախագծման, մշակման էտապները: Ցանցային տեղեկատվական տեխնոլոգիաներ:</p> |

14. Հիմնական գրականության ցանկը
Հիմնական

1. Գյուլումյան Ս., Գալանտերյան Ա.-<<Տեղեկատվական համակարգեր և տեխնոլոգիաներ>> Ուս. ձեռ. 2016թ.
2. Շ.Դ. Համբարձումյան.-<<Տեղեկատվական համակարգեր և տեխնոլոգիաներ" Ուս. ձեռ. 2004թ.
3. Վ.Վ. Առստամյան, Ռ.Վ. Ավետիսյան<<Տեղեկատվական տեխնոլոգիաներ>> Ուս. ձեռ. 2009թ.
4. Давидовская М,И. -.<<Современные информационные технологии>> 2008г.
5. Գալանտերյան Ա.-<<Ինֆորմատիկա և համակարգչային տեխնոլոգիաներ>> 2004թ.
6. Կոստեմյան Է.<<Ինֆորմատիկա և տեղեկատվական տեխնոլոգիաների հիմունքներ>> 2013 թ.
7. Կանոնակարգեր- ԱրՊՀ-Ստեփանակերտ-2015թ
8. Սիմոնյան Ս.Հ., Զիլինգարյան Գ.Վ.-Ինֆորմացիայի կիրառական տեսություն- Ուսումնական ձեռնարկ ԵրՊՃՀ 2007թ
9. Համակարգչային ցանցերի ստեղծման և սպասարկման ձեռնարկ- Երևան 2008
10. Семакин И.Г. , Е.К. Хеннер- Информационные системы и модели М-2006

| | | |
|---|------------------------------|-----------------|
| 1. 0103/B94 | 2. Քոմպյուտերների կիրառում | 3. 3ECTS կրեդիտ |
| 4. 3 ժամ/շաբ. | 5. դաս.-1, գործ.- 2. | |
| 6. I կիսամյակ | 7. Առանց եզրափակիչ գնահատում | |
| <p>8. Դասընթացի նպատակն է. Ուսանողներին ծանոթացնել կիրառական ծրագրերին, որպեսզի ապագա մասնագետները դրանք կարողանան կիրառել տարբեր բնագավառներում խնդիրների լուծման ժամանակ:</p> | | |
| <p>9. Դասավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա) մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • Ստանալով անհրաժեշտ տեսական գիտելիքներ, կկարողանա կիրառել տարբեր խնդիրների լուծման ժամանակ <p>բ) գործնական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • Տեքստային խմբարիչների օգտագործման հմտություն • Աղյուսակային խմբարիչների օգտագործման հմտություն • Տվյալների հենքերի օգտագործման հմտություն • Գրաֆիկական խմբարիչների օգտագործման հմտություն <p>գ) Առարկայական կարողություններ</p> <ul style="list-style-type: none"> • Կիրառական ծրագրերի կիրառում տարաբնույթ խնդիրների ժամանակ | | |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը՝ Մ1 Վերլուծելու, սինթեզելու, կազմակերպելու և պլանավորելու ունակություններ, Մ4 տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն), Մ8 Կատարված աշխատանքը պատշաճ ներկայացնելու և գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններ Մ14 Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը, նշանակությունն ու գործառույթները հասկանալ և ցուցաբերել ստացված հենքային գիտելիքները վերլուծելու կարևորությունը ընկալելու ունակություն</p> | | |

| | | |
|--|------------------------|------------|
| <p>Մ17 դրսևորել ժամանակակից խոր գիտելիքներ մասնագիտական ոլորտում (նորագույն տեսությունների, դրանց մեկնաբանությունների, մեթոդների և եղանակների իմացություն),</p> <p>Ը1 ցուցաբերեն ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում տվյալ առարկայական ոլորտում գործունեություն ծավալելիս:</p> <p>Ը2 Տիրապետել տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:</p> <p>Ը7 Որակի կարևորության գիտակցում և հաջողության ձգտում</p> | | |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. գործնական պարապմունք 3. ինքնուրույն աշխատանք | | |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <p>Նախատեսված են 2 միջանկյալ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, նախօրոք տրամադրված հարցաշարից: Ակտիվության աստիճան, ինքնուրույն աշխատանք՝ 2 միավոր առավելագույն արժեքով:</p> | | |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Ինֆորմացիայի հասկացությունը. Հատկությունները, կողավորումը, չափման միավորները: Հանակարգիչների դասակարգումը: Հաշվման համակարգեր: Տեղեկատվական տեխնոլոգիաներ, նրանց բնութագրումը և կազմակերպումը տարբեր ռեժիմներում: Համակարգչի հիմնական սարքերի կառուցվածքը և նշանակությունը: Օպերացիոն համակարգեր: Ֆայլ: Ֆայլային համակարգը և դրա կառուցվածքը: Կիրառական ծրագրային ապահովում: Կիրառական համակարգեր և ծրագրեր: Հակավիրուսային ծրագրեր: Ինֆորմացիայի պաշտպանության տեխնոլոգիաներ:</p> | | |
| <p>14. Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Կոստեյան Ս.Է. Ա.Ժ.Սմբատյան- Ինֆորմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների հիմունքներ 2013թ 2. Ս.Գալստյան -Նոր երկխոսություն համակարգիչների հետ 3. Վ.Հովսեփյան -Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկայի հիմունքներ 2005թ 4. Բ.Զանփոլադյան-Քոմպյուտերային կիրառական տեխնոլոգիաների հիմունքներ | | |
| 1. 0101/B73 | 2. Մաթեմատիկա1 | 3. 4կրեդիտ |
| 4. 4 ժամ/շաբ. | 5. դաս.-2,գործ.-2, | |
| 6 I կիսամյակ | 7. եզրափակիչ գնահատում | |
| <p>8. Դասընթացի նպատակն է՝</p> <ol style="list-style-type: none"> 1 Ուսանողների կողմից «Բարձրագույն մաթեմատիկա»-ի հիմունքների տիրապետումը: 2 Ուսանողների մոտ ձևավորելու հմտություններ աշխատելու բարձրագույն մաթեմատիկայի արստրակտ հասկացությունների հետ: 3 Առարկայի կիրառական ուղղվածության խնդիրների լուծման մեթոդների հստակ տիրապետում: 4 Մաթեմատիկական անալիզի, բարձրագույն հանրահաշվի և անալիտիկ երկրաչափության հիմունքներին տիրապետումը, որն անհրաժեշտ է մաթեմատիկական դասավանդվող հաջորդ առարկաների ուսումնասիրման և յուրացման համար, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կարողանալ բարձրագույն մաթեմա- | | |

| |
|---|
| <p>տիկայի ուսուցանած մեթոդները կիրառել այլ առարկաներում հանդիպող խնդիրների լուծման համար, մասնավորապես կառավարման տեղեկատվական համակարգերում հանդիպվող խնդիրներում:</p> |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա) մասնագիտական գիտելիք և իմացություն Ածանցյալ: Դիֆերենցյալ:Ինտեգրալ: Ֆունկցիայի բարձր կարգի ածանցյալների եւ դիֆերենցիալների հաշվման մեթոդները: Դիֆերենցիալ հաշվի հիմնական թեորեմները: Թեյլորի բանաձևը, մնացորդային անդամի տեսքերը: Լոպիտալի կանոնը: Ֆունկցիայի վարքի բնութագրիչների և ֆունկցիայի գրաֆիկի բնութագրիչների ուսումնասիրման կամ որոնման մեթոդները: Անորոշ ինտեգրալների հաշվման հիմնական մեթոդները, Որոշյալ ինտեգրալի եւ ինտեգրելիության հասկացությունները, որոշյալ ինտեգրալի հատկությունները, ինտեգրալ հաշվի հիմնական բանաձևը, որոշյալ ինտեգրալի հաշվման հիմնական մեթոդները : բ) գործնական մասնագիտական կարողություններ Հաշվել տարրական ֆունկցիաների առաջին կարգի եւ բարձր կարգի ածանցյալները եւ դիֆերենցիալները: Որոշել ֆունկցիայի մոնոտոնության միջակայքերը, մեծագույն եւ փոքրագույն արժեքները, ֆունկցիայի գոգավորության կողմերի միջակայքերը, շրջման կետերը, ուղղագիծ եւ թեք ասիմպտոտները, կառուցել ֆունկցիայի գրաֆիկը ամբողջական տեսքով: Հաշվել անորոշ եւ որոշյալ ինտեգրալներ: գ) ընդհանրական /փոխանցելի կարողություններ Ածանցման ու դիֆերենցման հասկացություններին: Ֆունկցիայի վարքի ուսումնասիրման մեթոդներին, անորոշ ինտեգրալների հաշվման հիմնական մեթոդներին, ինտեգրելի ֆունկցիաների դասերի հաստատման սկզբունքներին, որոշյալ ինտեգրալի հաշվման մեթոդներին</p> |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը՝ Մ1 Վերլուծելու, սինթեզելու, կազմակերպելու և պլանավորելու ունակություններ, Մ2 մասնագիտական ոլորտի հենքային և ընդհանուր գիտելիքների հիմունքների իմացություն, Մ12 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն, Ը2 Տիրապետել տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:</p> |
| <p>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝</p> <ul style="list-style-type: none"> • Դասախոսություն • Գործնական աշխատանք • Անհատական և ինքնուրույն աշխատանքներ |
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշները Ընթացիկ ստուգումները կազմակերպվում են համակարգչով, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով: Ստուգման թեստը պարունակում է 25 հարց, 1 հարցը 0.2 միավոր: Եզրափակիչ բանավոր ստուգում՝ 6 միավոր առավելագույն արժեքով: Ակտիվության աստիճան, ինքնուրույն աշխատանք՝ 2 միավոր առավելագույն արժեքով:</p> |

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.
Անորոշ ինտեգրալ: Որոշյալ ինտեգրալ: Որոշյալ ինտեգրալի կիրառություններ: Մի քանի փոփոխականի ֆունկցիա, սահման և անընդհատություն: Մի քանի փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ հաշիվ: Կրկնակի և եռակի ինտեգրալներ: Կորագիծ և մակերևույթային ինտեգրալներ: Թվային շարքեր: Ֆունկցիոնալ և աստիճանային շարքեր: Դիֆերենցիալ հավասարումներ: Հավանականությունների տեսություն: Մաթեմատիկական վիճակագրության տարրերը:

14.Հիմնական գրականության ցանկը.

1. Фихтенгольц Г.М “ Курс дифференциального и интегрального исчисления” Том 1, 2
2. Սաղաթեյան Վ.Վ. "Բարձրագույն մաթեմատիկայի դասընթաց" մաս 1, Երևան, 1962 թ.
3. Գևորգյան Գ.Գ. , Գալստյան Լ. Հ. և ուրիշներ “Մաթեմատիկական անալիզի խնդրագիրք” մաս 1, 2, Երևան
4. Демидович Б. П. , Сборник задач и у-пражнений по математическому анализу М. 1972. 543с
1. Кудрявцев В.А., Демидович Б.П.- “Краткий курс высшей математики”, Наука М. 1989г.
2. Шупачев В.С.- “Высшая математика”, Высшая школа, М. 1976г.\
3. Ս.Կ. Պետրոսյան- Մաթեմատիկական անալիզի դասախոսություններ, I; 2008, II; 2006, III; 2007, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատարակչություն
4. Ս.Կ.Պետրոսյան- Բարձրագույն մաթեմատիկա, I, 2008, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատարակչություն:
5. Տոնոյան Գ.Ա.- Բարձրագույն մաթեմատիկայի խնդիրների ժողովածու, Երևանի պետ. համալսարան 1990թ.

լրացուցիչ

1. Никольский С. М. Курс математического анализа. М.: Изд-во “Наука”.1973.Т. 1. 432 с.
2. Зорич В.А. “ Математический анализ” ч.2 М. 1984 6с
3. Уваренков И.М Маллер М.З. “Курс мате- матического анализа” Том 1
4. Берман Г.Н. ”Сборник задач по курсу математического анализа” М. Наука 1969, 439с
5. Кудрявцев Л. Д. Курс математического анализа. Т.1. М.: Изд-во “Высшая школа”. 1981. 687 с.
6. Тер-Крикоров А. М., Шабунин М. И. Курс математического анализа. М.: Изд-во “Физматлит”. 2003. 672 с.
7. Хинчин А.Я. Краткий курс математического анализа. М.: Изд-во “ГИТТЛ”.

համացանցային աղբյուրներ

| | | |
|---------------|------------------------------|------------------|
| 1. 0103/B95 | 2. <u>Ինֆորմատիկա-1</u> | 3. 5 ECTS կրեդիտ |
| 4. 5 ժամ/շաբ. | 5. դաս 1, գործ 2. լաբ.- 2. | |
| 6. I կիսամյակ | 7. Առանց եզրափակիչ գնահատում | |

8.Դասընթացի նպատակն է

տալ գաղափար ինֆորմատիկայի, ժամանակակից ԷՀՄ-երի, նրանց դերի, ինֆորմացիոն տեխնոլոգիաների և հաշվողական տեխնիկայի ժամանակակից միջոցների նշանակության և կիրառության բնագավառների մասին: Խորը

գիտելիքների ձեռքբերում ինֆորմացիա, ալգորիթմ, համակարգիչ, կողավորում և ծրագիր գաղափարների վերաբերյալ: Ծրագրավորման C ++ լեզվի իմացության ձեռքբերում: Պրակտիկ ունակությունների ձեռքբերման նպատակով քումփյուրերի օգնությամբ համապատասխան խնդիրների ծրագրային լուծում:

9.Դասավարտին ուսանողն ունակ կլինի՝

